Երկիր

ԱՊՐԻԼ 5-11
2002

2

Մենակյացը դուրս է գալիս ապարանքից

Սեփական ժողովրդի մեջ այս ապարանքում քառամյա մենություն անցկացրած Լեւոն Տեր-Պետրոսյանը պատրաստվում է իջնել քաղաքական ասպարեզ: Հակառակ այն բանի, որ նա վերադարձի նախապայման էր դնում ժողովրդի խնդրանքը, որը, դատելով ամեն ինչից, իսպառ բացակայում է:

Վերջին օրերին հայրենի քաղաքական եւ քաղաքակնամերձ միջավայրում աշխուժորեն քննարկվում է «21-րդ դար» կուսակցության համագումարը: Անշուշտ, սույն իրադարձությունն ինքնին նմանօրինակ ուշադրության դժվար թե արժանանար, եթե համագումարին ներկա չլիներ նախկին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը եւ չհայտարարեր ակտիվ քաղաքականություն վերադառնալու իր մտադրության մասին:

Արդեն իսկ առկա են այդ հայտարարության տարաբնույթ, հաճախ իրարամերժ գնահատականներ ու մեկնաբանություններ: Ոմանք այն համոզմունքն ունեն, թե նախկին նախագահի վերադարձը պայմանավորված է հիշական շրջանակներում վերամիավորման գործընթացներով: Ուրիշները նման հայտարարությունը դիտարկում են որպես նախագահական ընտրություններում թեկնածությունն առաջադրելու հայտ: Կան նաեւ տեսակետներ, թե նախկին նախագահի այս քայլը պայմանավորված է հիմնականում արտաքին ազդակներով, եւ որպես հիմնավորում նշում են Տեր-Պետրոսյանի Միացյալ Նահանգներից հրավեր ստանալու հանգամանքը: Եվ այս առումով արդեն իսկ քննարկվում է իրադարձությունների հետագա զարգացման մի քանի սցենար:

Այս պահին դժվար է միանշանակ պնդել, թե նախկին նախագահի նման քայլը կոնկրետ ինչ ներքին կամ արտաքին շարժառիթներով է պայմանավորված: Առավել հավանական է թվում այն ենթադրությունը, որ ներքին ու արտաքին մի քանի ազդակներ միաժամանակ են ազդել եւ պայմանավորել Տեր-Պետրոսյանի բավական համարձակ քայլը, քանզի զգուշավոր եւ տեւական հաշվարկներ անելու հակումներ ունեցող այս գործիչը ակտիվանալու համար պետք է որ բավական լուրջ ազդակներ ունենար: Ամեն դեպքում, կարելի է դիտարկել մի քանի պահ, որոնք կարող են լույս սփռել շատերի համար անսպասելի, իսկ մեր կարծիքով միանգամայն օրինաչափ այս իրողության շարժառիթների վրա:

Նախ ակնհայտ է, որ Լ. Տեր-Պետրոսյանը ոչ թե վերադառնում է ակտիվ քաղաքականության, այլ պարզապես բացահայտում է քաղաքական դաշտի մի թեւում որոշումներ կայացնելու մեխանիզմների վրա իր ազդեցության իրողությունը: Միամտություն է կարծել, թե իր պաշտոնանկությունից հետո նախկին նախագահը հեռացել էր նաեւ քաղաքականությունից: Քանզի, ինչպես ամեն օր առիթով ու անառիթ խոսելը չի նշանակում քաղաքականության մեջ լինել, նույնպես էլ հազվադեպ խոսելը բնավ չի նշանակում քաղաքականությունից դուրս լինել: Պարզապես, այսօր միավորվող լիբերալներին առաջնորդ է պետք, իսկ այդ դաշտի ընդհանուր անդեմությունն ամրապնդելու միակ թեկնածուն հենց նախկին նախագահն է, որը նաեւ այն առանցքն է, որի շուրջ կարելի է համախմբել բազում հին ու նոր ներհակություններով ապրող այդ դաշտը:

էջ 3

Պայքարի նոր փուլ

Մարտի 29-30-ը Երեւանում կայացավ ՀՅԴ Հայ Դատի Կենտրոնական խորհրդի լիագումար նիստը, որի նպատակն էր պարզաբանել եւ վերլուծել տարածաշրջանային նոր զարգացումները նրա հետ կապված քաղաքականության նոր մարտավարություն մշակելու համար: Ապրիլի 1-ին ՀՅԴ «Սիմոն Վրացյան» կենտրոնում տեղի ունեցած մամուլի ասուլիսը նպատակ ուներ ՁԼՄ-ներին ներկայացնելու լիագումար նիստի արդյունքները: ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը նշեց, որ սա այն խորհուրդն է, որի ընթացքում քննարկված եւ այդ քննարկումների արդյունքում կայացրած որոշումները, մասնավորապես Հայ Դատի ուղեգծային խնդիրները, պետք է ներկայացվեն ՀՅԴ Բյուրոյին:

ՀՅԴ Բյուրոյի անդամ Կարո Արմենյանն ասաց, որ նիստերի ընթացքում քննարկման նյութ է դարձել հիմնականում երկու խնդիր. «Վերջին շրջանում համաշխարհային քաղաքականության մեջ նկատելի զարգացումներ տեղի ունեցան սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո, եւ անշուշտ, մեծ անհրաժեշտություն էր ճշտել մեր մարտավարությունը, մեր անելիքները քաղաքական այս նոր պատկերի վրա: Երկրորդ խնդիրն անշուշտ բխում է նաեւ վերը նշված տեսակետից ճշտել Հայ Դատի ռազմավարության հետ առնչվող հարցերը եւ ըստ դրանց անհրաժեշտ վերանայումներ անել»:

էջ 2

Դիմորդ-2002

«Երկիր»-ը այս եւ առաջիկա համարներում կտպագրի պետական բուհերի 2002 թվականի ընդունելության քննությունների առարկաների հարցատոմսերի եւ հարցարանների նմուշները:

Քաղաքական 2

Ապագայի հիշողություն

«Պարզ զրույցի փորձ». Ցեղասպանության ճանաչման հարցում Դաշնակցության դեմ մեղադրանքը հիմնազուրկ է: Դա ողջ հայության կամքն է:

Քաղաքական 4

Մեկ քայլ առաջ, երկու քայլ ետ

Վեցյակի կողմից Սահմանադրության նախագծի ետ վերցնելը փաստեց, որ նրանց հիմնական նպատակը ոչ թե համակարգի բարեփոխումն է, այլ նախընտրական մթնոլորտում քաղաքական շահարկումը:

2+1 5

«Շարմը» «Ա 1+»-ի բակում

Անվիճելի է, որ 37-րդ դեցիմետրային հաճախականության շահագործման իրավունքի ընձեռումը «Շարմ» ընկերությանը զուրկ է տրամաբանությունից: Բայց նույնքան անվիճելի է նաեւ այն, որ ստեղծված իրավիճակը ոմանք փորձում են օգտագործել իրենց քաղաքական խաղերի համար: Իրավիճակի շուրջ է մեր զրույցը Արամ Աբրահամյանի եւ Շամիրամ Աղաբեկյանի հետ:

Կառավարում 6

Մաքսատնային ռեկետ

Չնայած հավաստիացումներին, թե մեր մաքսատները դարձել են ժամանակակից սարքերով օժտված հենակետեր, սակայն դրանք շարունակում են մնալ նույն բարձիթողի վիճակում, ու սահմանն անցնող ուղեւորները շարունակում են դրամաշորթման ենթարկվել:

Ընկերային 8

Խճճված որդեգրում

Հայկական ընտանիքի ամրությամբ հպարտացող հասարակության մեջ մեծ տոկոս են կազմում ծնողազուրկ երեխաները, որոնց մի մասին առավել ապահով ճակատագիր է սպասվում որդեգրմամբ: Անցյալ տարի նրանց թիվը եղել է 161:

Իրավական 9

Անհաղթ պատգամավորը

Աժ պատգամավոր Մելիք Գասպարյանը հայ հասարակությանը հայտնի է ավելի շատ տարբեր դատական քաշքշուկներով, քան իր քաղաքական գործունեությամբ:

Կրթություն 10

Դիմորդների շանսերը մեծանում են

Կառավարությունը հաստատել է պետական բուհերի այս տարվա ընդունելության տեղերի թիվը: Միայն կենտրոնացված համակարգով ընդունելության քննություններում ներգրավված բուհերին այս տարի պետպատվերի շրջանակներում տրամադրվել է 3527 տեղ:

ملحق أرتاك

ԽՈՍՔ

Սողացող ապաքաղաքականացում

Պետությունն ամուր է քաղաքացիական հասարակությամբ, որի հատկանիշներից թերեւս ամենակարեւորը քաղաքականացված անհատներով ձեւավորված լինելն է: Քանզի վերջիններիս առկայության պայմաններում են միայն իշխանությունը, վարչական համակարգը, քաղաքական կազմակերպությունները պատասխանատու դառնում իրենց գործողությունների, պարտականությունների եւ խոստումների կատարման ընթացքում:

Միայն քաղաքականացված հասարակությունը կարող է հաշիվ պահանջել իր տված վստահության քվեի, լիազորությունների համար: Սակայն տարիներ շարունակվող հասարակության ապաքաղաքականացման գործընթացն այսօր էլ ակնառու է իր բազում դրսեւորումներով, որ ներառում են երիտասարդությունը, պետական համակարգը, անգամ հեռուստատեսությունը:

Այդ տրամադրության արտահայտությունն են նախկինում թե այսօր արծարծվող ուսանողական, երիտասարդական շրջանակներում կուսակցական պայքարը չտարածելու, նախընտրական մթնոլորտը բացառելու կոչ-հայտարարությունները:

Նման մոտեցումը հանգեցնում է քաղաքական հայացքներից զուրկ, սեփական իրավունքներն ու պարտականությունները չգիտակցող սերնդի ձեւավորման, որը վաղը դառնալու է երկրի քաղաքական, վարչական, տնտեսական տերը:

Նույն ապաքաղաքականացած մթնոլորտն է տիրում հայկական եթերում, որի նոր դրսեւորումը դարձավ լրատվական ճնշող ծավալով գործող հեռուստաընկերության (անկախ նրա սուբյեկտիվությունից) փոխարինումը զվարճալի, հայ երիտասարդության, հասարակության մեջ փողոցային գռեհկություն սերմանող ընկերությամբ:

Ապաքաղաքականացած է Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգը, երբ որեւէ կուսակցություն դժվարանում է թեկնածու առաջադրել տեղական մարմինների ընտրություններում, ու ընտրապայքարը դառնում է պարզ ազգակցական պայքար:

Օրինակները կարելի է շարունակել. դրանք ամենուր են: Այս վիճակը ծեռնտու է ու բաղձալի առաջին հերթին արհեստականն լծակներով ձեւավորված ու ներկայումս կազմավորվող կուսակցություններին, քանզի նրանց նպատակը իդեալի, մտքի, գաղափարի պայքարով ծեռք բերված հաղթանակը չէ, այլ ապաքաղաքական հասարակությունում կաշառքով, կեղծիքով քվե ստանալը: Արդյունքում կորցնում ենք լիարժեք քաղաքացիական հասարակության ձեւավորման ու ամրապնդման հերթական հնարավորությունը ստանալով միայն հասարակության ապաբարոյականացում:

Այս իրավիճակն ունի միայն մեկ ելք. համակարգային արմատական բարեփոխում, որի արդյունքում քաղաքականացված հասարակությունը իր կեցվածքով, կարծիքով կվերահսկի իր իսկ քվեով ձեւավորված պատասխանատու քաղաքական իշխանությանը:

ՊԱՐԶ ԶՐՈՒՅՑԻ ՓՈՐՁ

Ապագայի հիշողություն

Աղվան ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մե՛նք պետք է հասկանանք, որ առանց Ցեղասպանության ճանաչման հնարավոր չէ մեր տարածաշրջանում կայուն խաղաղություն, զարգացման ու ժողովուրդների տեւական համագործակցության նախադրյալներ ստեղծել:

Նախորդ զրույցներից մեկում հպանցիկ անդրադարձել էի Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջի քննադատությանը՝ խոստանալով թեման առանձին քննարկել հետագայում: Կարծեմ՝ ժամանակն է:

Նախ՝ այս պահանջը հայ հանրության գրեթե բոլոր հոսանքներինն ու շերտերինն է: Վերջին տասնամյակում մեկ-երկու քաղաքական ուժերի փորձը՝ խնդիրը մի կողմ դնել, արդեն իսկ դատապարտված է անհաջողության: Այս պահանջը բոլորինն է, բայց, բնականաբար, ընդհանուրից առանձնացվում ու քննադատվում է հենց Դաշնակցության դիրքորոշումը, քանի որ մեր կուսակցությունն է խնդիրը միշտ պահել քաղաքական հարթության մեջ:

Հիշեցնեմ քննադատության միտք բանին. ինչ եղել, եղել է, ճիշտը՝ անցյալը հանգիստ թողնելն է ու ապագայով զբաղվելը: Ցեղասպանության ճանաչումը ոչինչ չի տալու, միայն մեր ներկա ներուժն է վատնելու անցյալում:

Նման մտածողության մեջ մեծ պարապ կա: Այդպիսիք ժամանակ-պատմության մի հատված են առնում միայն ու ենթադրում, թե աշխարհն անդարձորեն վերափոխվել է:

Ցավոք, մեր ժողովրդի ողբերգությունը, այս կամ այլ դրսեւորումով, բազմիցս կրկնվել է այլոց հետ, ինչը վկայում է, որ ցեղասպանության կամ էթնիկական զտումների ճանապարհով մեկ ուրիշ ժողովրդի պատմական հայրենիքի տարածքը յուրացնելու նպատակն ու մեթոդը շարունակում է գործող բանաձեւ մնալ մեծ քաղաքականության մեջ: Եվ այդպիսի նախադեպի Հայոց ցեղասպանության միջազգայնորեն վերջնական ճանաչման բացակայությունը նույնպես ասվածի ապացույց է: Սեփական կարիքների համար ուրիշի հաշվին կենսական տարածքներ ազատելու տարատեսակ ձեւերը այսօր էլ սպառված չեն:

Սա է վտանգավորը, այս համատեքստում է անհրաժեշտ քննարկել 1915-ի Ցեղասպանության համընդհանուր ճանաչման՝ ու դատապարտման պահանջը: Իսկ այս կտրվածքով նայելիս խնդիրն այլեւս ոչ թե անցյալին, այլ ապագային է առնչվում:

Առաջին հերթին մենք պետք է հասկանանք, որ առանց Ցեղասպանության ճանաչման հնարավոր չէ մեր տարածաշրջանում կայուն խաղաղություն, զարգացման ու ժողովուրդների տեւական համագործակցության նախադրյալներ ստեղծել: Ճիշտ է, այս առումով, սառույցը կարծես շարժվում է, բայց մենք պարտավոր ենք նաեւ գիտակցել, որ հարցը միայն հայ-թուրքական հարաբերություններով չի սպառվում: Այն շատ ավելի տարողունակ է, ներկա աշխարհի ուժային կենտրոնների կողմից կարող է շրջանառվել բազմաթիվ դրսեւորումներով ու բազմազան շահերի խաչաձեւմամբ: Այդ մեծ քաղաքականության մեջ մենք պարտավոր ենք բացառել մեզ քաղաքական մանրադրամի վերածելու փորձերը:

Մի բան հստակ է. երբ միջազգային հանրությունը եւ Թուրքիան ընդունում են Ցեղասպանության փաստը, Հայաստանը ազատ ու լիարժեք զարգացման շատ ավելի մեծ հնարավորություններ է ստանում: Մի՞թե պատահական է, որ իրեն ուղղվող բազմաթիվ պահանջներից Թուրքիան հատկապես մեր խնդրում է կտրուկ հակազդում: Այո, մենք հասկանում ենք. թուրք ժողովրդի համար հարցը ոչ միայն քաղաքական է, այլեւ սեփական ինքնությանն ու հոգեբանությանն է առնչվում, բայց դա ոչ մեզ, ոչ նրանց մեր ապագայի հանդեպ պատասխանատվությունից չի ազատում:

Կրկնում եմ՝ Ցեղասպանության ճանաչման պահանջը եւ համապատասխան հատուցման հարցը Դաշնակցության համար ապագայում մեր ժողովրդի լիարժեք կենսագործունեության նախապայմաններից է:

Այնպես որ, 87 տարի առաջ Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դրանից բխող քաղաքական հետեւանքների խնդիրը շարունակում է մնալ մեր ժողովրդի, մեր կուսակցության օրակարգում: Սա նաեւ ազգային-պետական անվտանգության եւ հեռանկարի խնդիր է: Անկախ պետականության վերջին տարիներին այս իրողությունը գիտակցվում ու արմատավորվում է՝ վերածվելով ամբողջ հայության կամքի: Սա արդեն ապացույց է, որ Դաշնակցությանն այս հարցում քննադատելը հիմնազուրկ է:

ՀՅԴ Հայ Դատի պատասխանատուների հանդիպումները

Երեւանում գումարված ՀՅԴ Հայ Դատի կենտրոնական խորհրդի նիստի ընթացքում կայացան մի շարք աշխատանքային հանդիպումներ:

Մարտի 28-ին ՀՅԴ Բյուրոյի անդամ, Հայ Դատի կենտրոնական խորհրդի ատենապետ Կարո Արմենյանը, ընկերակցությամբ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի ատենապետուհի Հիլդա Չոբոյանի եւ Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր-տնօրեն Արամ Համբարյանի, հանդիպեցին ՀՀ ԱԳ փոխնախարար Ռուբեն Շուգարյանի հետ: Հ. Չոբոյանը եւ Ա. Համբարյանը հանդիպումներ ունեցան նաեւ ԱԳՆ Եվրոպայի եւ Միացյալ Նահանգների վարչությունների պետերի հետ:

Կարո Արմենյանը հանդիպումներ ունեցավ նաեւ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի եւ ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հետ:

Ապրիլի 3-ին Կ. Արմենյանը, Հ.Չոբոյանը եւ ՀՅԴ Բյուրոյի քաղաքական եւ Հայ Դատի հարցերի գրասենյակի (Երեւան) տնօրեն Կիրո Մանոյանը հանդիպեցին ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամների հետ:

Գումարվեց ՀՅԴ մարմինների խորհրդաժողովը

Ապրիլի 2-3-ը Ծաղկաձորում գումարվեց ՀՅԴ մարմինների խորհրդաժողովը, որին մասնակցեցին ՀՅԴ աշխարհասփյուռ կառույցի մարմինների ներկայացուցիչներ: Նախորդ խորհրդաժողովը կայացել էր 2001-ի փետրվարին Երեւանում:

Ժողովը քննարկեց կուսակցության շրջանային մարմինների եւ ՀՅԴ Բյուրոյի մեկամյա գործունեությունը, կուսակցության առաջիկա մեկ տարվա իրագործելիք ծրագրերը, ինչպես նաեւ կուսակցության քաղաքականությունը մի շարք հարցերի վերաբերյալ:

Մենակյացը դուրս է գալիս ապարանքից

Արտակ ԱՐԱՄՅԱՆ

էջ 1

Այս փուլում նախկին նախագահը կգերադասի հանդես գալ ոչ թե թեկնածուի դերում, որի վրա պետք է խաղագումար դրվի, այլ այն անձի դերում, որն ինքն է որոշում, թե ում վրա խաղագումար դնի՝ անշուշտ, առաջին հերթին նկատի ունենալով հենց իրեն:

Նաեւ ակնհայտ է, որ ՀՀՇ-ն այլեւս հույսը չի կապում գործող իշխանության դեմ միասնական կոալիցիա կազմելու այլ քաղաքական ուժերի փորձերի հետ: Քանզի գոնե «եռյակի» փառահեղ տապալումն ու ներքին զզվռտոցը ցույց է տալիս, որ ներկայիս ընդդիմադիրների գերակշիռ մասին նույնիսկ «ընդդեմ» գաղափարի շուրջ միավորելը բարդ է նրանց առաջնորդների ծայրահեղ հավակնոտության պատճառով:

Միաժամանակ, ակնհայտ է, որ ՀՀՇ-ն ու տեւական շրջան ստվերում գործող նրա նախընտրական շտաբն այլեւս չեն ուզում բավարարվել օրվա իշխանությունների դեմ այլազան հակադիր տրամադրություններ սադրելով կամ, այսպես ասած, «շիրա տալով»: Դատելով ամեն ինչից, ՀՀՇ-ն այլեւս մտադիր է իշխանափոխության իրականացման գործի գլուխ կանգնել: Բայց նման գործի գլուխ կանգնելու համար հարկ է, որ ՀՀՇ-ն ինքը գլուխ ունենա: Դրա համար էլ Լ. Տեր-Պետրոսյանը ակտիվ քաղաքականություն վերադառնալու մասին հայտարարություն է անում:

Այսպիսով, կարելի է ասել, որ նախկին նախագահի հայտարարությունն ուներ թե ներքին ու թե արտաքին սպառման նշանակություն, որ, այնուհանդերձ, միահյուսվում են գլխավոր ասելիքի սահմանում: Այն է կա այն քաղաքական ուժը եւ անձը, որ պատրաստ է ստանձնել գործող իշխանության ու գործող նախագահի լուրջ այրնտրանքի դերը:

Ասվածն, անշուշտ, անպայմանորեն չի ենթադրում, որ Տեր-Պետրոսյանը կդնի իր թեկնածությունը գալիք նախագահական ընտրություններում: ՀՀՇ-ն եւ անձամբ Տեր-Պետրոսյանը կգնան այդ քայլին երկու անհրաժեշտ պայմանների բավարարման պարագայում: Առաջին, եթե Տեր-Պետրոսյանի թեկնածության շուրջ միավորվի ոչ միայն ամբողջ լիբերալ դաշտը, այլեւ ներկայիս բազմաշերտ ու բազմագույն ողջ ընդդիմությունը, եւ առաջ գա իշխանության միասնական թեկնածու Ռոբերտ Քոչարյան-ընդդիմության միասնական թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյան մրցակցող զույգը: Երկրորդ պայմանն առավել էական է, Տեր-Պետրոսյանը կդնի իր թեկնածությունը այն դեպքում, երբ հաղթելու հավանականությունը շատ մեծ կլինի: Իսկ ավելի ճիշտ նա չի համաձայնի առաջադրվել, եթե պարտվելու հավանականությունը բացառված չլինի: Սա շատ էական հանգամանք է թե ՀՀՇ-ի, թե, առավել եւս, անձամբ Տեր-Պետրոսյանի համար: Քանզի ընտրություններում կրած պարտությունն արդեն դժվար կլինի ներկայացնել ու բացատրել այն նույն երանգներով ու մեկնաբանություններով, որոնք օգտագործվեցին 1998-ի փետրվարի 3-ի հեռուստատեսային հայտնի ելույթի ժամանակ:

Հետեւաբար, այս պահին ՀՀՇ-ն եւ Տեր-Պետրոսյանն ավելի շատ աշխատում են նշված ներքին ու արտաքին երաշխիքներն ապահովելու ուղղությամբ: Եվ, պետք է ասել, բավական աշխույժ են աշխատում: Մանավանդ դա վերաբերում է արտաքին ճակատում տարվող աշխատանքներին, որոնք ներառում են նախընտրական գործունեության համար անհրաժեշտ համապատասխան խոշոր դրամագլխի հանգանակումը եւ, որ առավել էական է, դրսի ազդեցիկ ֆինանսական ու քաղաքական (մասնավորապես ամերիկյան) միջավայրերում լոբբիստական գործունեությունը: Այսինքն արտաքին դաշտում փորձ է արվում տեղավորվել աշխարհաքաղաքական գործընթացների հավանական զարգացումների տրամաբանության մեջ եւ համոզել ոմանց, թե մեր տարածաշրջանում ամերիկյան որոշ շրջանակների պատկերացրած նպատակադրումների իրականացման համար առավել հարմար ու նախընտրելի գործընկերը հենց ՀՀՇ-ն է (պատահական չեն այս առումով ադրբեջանական եւ թուրքական մամուլում վերջին օրերին հնչող ափսոսանքները Լ. Տեր-Պետրոսյանի 1998-ին իշխանությունից հեռանալու կապակցությամբ):

Ու քանի դեռ հիշատակված գործընթացները որեւէ կոնկրետ արդյունք չեն տվել, ՀՀՇ-ն եւ Տեր-Պետրոսյանը կնախընտրեն սպասել: Իսկ սպասել նրանք կարողանում են, ընդ որում, սպասում են ոչ թե այն բանին, որ ժողովուրդը խնդրի իրենց վերադառնալ, այլ որ ինչ-որ ուժի ծեռնտու լինի իրենց վերադարձը: Հետեւաբար, այս փուլում նախկին նախագահը կգերադասի հանդես գալ ոչ թե թեկնածուի դերում, որի վրա պետք է խաղագումար դրվի, այլ այն անձի դերում, որն ինքն է որոշում, թե ում վրա խաղագումար դնի անշուշտ, առաջին հերթին նկատի ունենալով հենց իրեն: Իսկ դա, ինչպես նշվեց, էապես կախված է այն բանից, թե արդյո՞ք մի քանի մեծահարուստների լոբբիստական ջանքերը արդյունք կտան: Այնպես որ, սպասենք առաջիկա զարգացումներին:

Պայքարի նոր փուլ

էջ 1

Փաստաթուղթը ներառում է հետեւյալ դրույթները հայ անկախ պետականության ամրապնդում, պահանջատիրական մեր իրավունքների արծարծում աշխարհի տերությունների քաղաքական բեմերում, ինչպես նաեւ Արցախյան հարցը:

Ի պատասխան այն հարցի, թե առաջիկայում կոնկրետ ի՞նչ քայլեր են նախատեսվում, Կարո Արմենյանն ասաց, որ անհրաժեշտ է վերանայել Մինսկի համանախագահության աշխատանքները շեշտելով, որ այդ գործընթացը երբեք չպետք է հանգեցնի թեկուզ մի թիզ հող կորցնելուն:

ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի գրասենյակի ատենապետուհի Հիլդա Չոբոյանը նշեց, որ չնայած այս գրասենյակը Եվրոպայում գործում է արդեն մեկ տարի, աշխատանքները Հայ Դատի ուղղությամբ տարվել են դեռեւս 1985 թ. ի վեր: Խորհրդային Միության փլուզումից, ինչպես նաեւ Արցախյան հիմնախնդրից հետո Հայ Դատին առնչվող խնդիրները փոքր-ինչ հետընթաց ապրեցին: Սակայն այդ ընթացքում, ինչպես նշեց ատենապետուհին, աշխատել են Բաքվի, Սումգայիթի ջարդերի դատապարտման ուղղությամբ: Ինչ վերաբերում է Հայ Դատին, ապա այս ուղղությամբ աշխատանքներն ակտիվացան վերջին երեք տարիների ընթացքում, եւ որոշվեց հարցը դնել ավելի կայուն քաղաքական հողի վրա: Չոբոյանը նշեց, որ 1999 թ. գրասենյակի օժանդակությամբ հաջողվել է Եվրախորհրդի կողմից Մինսկի գործընթացին աջակցություն ցուցաբերելու համար փաստաթուղթ ստորագրել: 2000 թ. Եվրախորհրդի տեղեկագրում արձանագրված է Թուրքիային ուղղված Ցեղասպանության դատապարտման բողոքի ձայնը, ինչպես նաեւ Հայաստանի շրջափակման հարցը: Անդրադառնալով «Թուրքհայկական հաշտեցման հանձնախմբի» գործունեությանը նա նկատեց, որ 2001 թ. այս հանձնախմբի քայլերի պատճառով աշխատանքները Հայ Դատի ուղղությամբ ավելի դժվարացան. «Մենք արդեն նախաձեռնություն ունեինք Ցեղասպանության հարցով մտնելու Գերմանիայի խորհրդարան, այնինչ այդ հանձնախմբի ի հայտ գալը երկմտանք առաջ բերեց հարցի վերաբերյալ»: Նույն խնդրի առնչությամբ Կարո Արմենյանը ավելացրեց, որ նմանօրինակ նախաձեռնությունները միշտ էլ Թուրքիայի կողմից կօգտագործվեն Ցեղասպանության հարցը քաղաքական ասպարեզից հանելու համար. «Այս հանձնախումբը իր էությամբ ոչ մի ժողովրդավարական հիմք չունի, ու մենք ամեն ջանք գործադրելու ենք նման նախաձեռնությունների կեղծ փաստերը բացահայտելու եւ դատապարտելու համար»:

ԱՄՆ-ի ՀՅԴ Հայ Դատի Վաշինգտոնի գրասենյակի վարիչ տնօրեն Արամ Համբարյանը ներկայացրեց գործունեության այն կարեւոր կետերը, որոնք տանում են դեպի Հայ Դատի նպատակների իրականացումը: Նա նշեց, որ կարեւոր նախապայման է լրատվամիջոցներով լայն քարոզչություն տանելը: Այս շրջանակներում հաջողվել է 1915 թ. եղեռնի տվյալներ մտցնել այնպիսի մի հզոր կազմակերպության թվային հանրագիտարանում, ինչպիսին «Microsoft»-ն է եւ սա այն դեպքում, երբ Թուրքիան սպառնում էր, որ իր երկրում կփակի կազմակերպության բոլոր գրասենյակները:

Ամփոփելով նիստերի ընդհանուր արդյունքները մասնակիցները նշեցին, որ իրենք հետամուտ են լինելու կայացրած որոշումների իրականացման համար եւ փորձելու են հակահարված տալ Թուրքիայի վարած քաղաքականությանը:

Կարինե ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ

ՀԱՄՑԵՄ

ԱՄՆ դեսպանատան հերթական միջամտությունը

Հայկական մամուլում ապրիլի 2-ին տպագրվեց ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան պաշտոնական հայտարարությունը առանց մեկնաբանությունների:

Խնդիրը հայտարարությունում արծարծված թեման չէ. այն այսօր հուզում է ողջ հասարակությանը, այլ ձեւը, որով մեր երկրում Միացյալ Նահանգների դեսպանատունը փորձում է դուրս գալ իր դիվանագիտական կարգավիճակից:

Սա Հայաստանում արդեն նորմա է դառնում: Մի քանի ամիս առաջ դեսպանատան մամլո ծառայության ղեկավար Ջոն Բալյանը քննադատական գնահատականներ ուղղեց ԱԺ հասցեին ու պատասխանի չարժանացավ:

Նույն ոչ դիվանագիտական կեցվածքը ցուցաբերեց Իսրայելի դեսպանը ուրանալով Հայոց ցեղասպանության փաստը:

Այս դեմարշերին ոչ համարժեք պատասխանը ԱՄՆ դեսպանատանը թույլ է տալիս նաեւ իր հայտարարությամբ թաքնված սպառնալիքի ուղին բռնել:

Խնդիրը, կրկնում ենք, «Ա1+» հեռուստաընկերության շուրջ քննարկումը չէ, այլ ԱՄՆ դեսպանատան որեւէ դիվանագիտական նորմ չպահելու արդեն կարծես ավանդույթ դարձած կեցվածքը:

Հանդիպման վերածված լսումներ

Ապրիլի 4-ին տարածաշրջանային վերջին զարգացումներին նվիրված փակ լսումները, կարելի է ասել, վերածվեցին ԱԳ եւ ՊՆ նախարարների հետ հանդիպման ու հարցուպատասխանի: Դժգոհություններ են հնչել լսումների կազմակերպիչների թերի պատրաստվածության մասին:

Ի դեպ, ամեն առիթով տարածաշրջանային վտանգների մասին խոսող Արտաշես Գեղամյանը բացակայում էր: Լսումներից հետո արտաքին գործերի նախարարն ու պաշտպանության նախարարը հրավիրված մամուլի ասուլիսում խոսեցին քննարկված հարցերի ուղղությունների, դրանց հետագա զարգացումների շուրջ: Հիշեցնենք, որ մինչ այդ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը ծեռնպահ մնաց դռնփակ լսումների վերաբերյալ կոնկրետ բան ասելուց եւ ընդհանուր հայտարարեց. «Կան որոշակի խնդիրներ, որոնք մեզանից կախված չեն, սակայն մտածում ենք, թե ինչ քայլեր կարող են կատարել հարեւանները, եւ համապատասխանաբար մենք ինչ պետք է անենք»:

«Հայաստանը շարունակելու է կոմպլեմենտար քաղաքականությունը, քանի որ դա հնարավորություն է տալիս բոլոր կողմերի հետ հավասարակշռված կերպով աշխատել եւ նվազագույնի հասցնել բացասական երեւույթները մեր երկրում»,- կրկին անգամ հայտարարել է Վարդան Օսկանյանը դռնփակ նիստերից հետո: Իսկ ինչ վերաբերում է Ղարաբաղյան հարցի կարգավորմանը, ապա Ադրբեջանի հստակ դիրքորոշումը ակնհայտ կդառնա մայիս-հուլիս ամիսներին կայանալիք երկու երկրների նախագահների ներկայացուցիչների հանդիպումից հետո, որով չեն բացառվում հարցի կարգավորման ուղղությամբ ռեալ քայլերը, թեեւ կարծիքներ են հնչում նաեւ, որ եւ Ադրբեջանին, եւ Հայաստանին, հաշվի առնելով, որ երկու երկրներն էլ նախընտրական փուլում են, ծեռնտու է Ղարաբաղի հարցում հրավիճակի պահպանման քաղաքականությունը:

Պաշտպանության նախարարն էլ, անդրադառնալով մեր երկրի ռազմական քաղաքականությանը, հերքել է տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ այն կանխատեսումները, ըստ որոնց, Հայաստանը ակտիվացնում է իր ռազմական հարաբերությունները ԱՄՆ-ի հետ ելնելով տարածաշրջանում Ռուսաստանի դերի նվազեցումից: Սերժ Սարգսյանը նշեց. «Փոխլրացման քաղաքականությունը չի կարող լինել փոխարինման քաղաքականություն: Ամերիկյան կողմը նպատակ չունի Ռուսաստանին փոխարինել Հայաստանում»:

Սեփ. լր.

Լավ է մի մոմ վառել, քան խավարը անիծել

Մեր երկիրն այսօր կանգնած է կարեւոր իրադարձությունների նախաշեմին՝ նախագահական, խորհրդարանական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Ընդդիմությունը ձեռքից բաց չի թողնում իշխանությանը խարդախ անվանելու ցանկացած շանս, անկախ նրանից՝ օբյեկտի՞վ է դա: Դիմությունն էլ առայժմ աշխատում է տնտեսական ցուցանիշները հիմնավորել: Երանգավորվում է եւս մի տեսակ, որը, մատնանշելով իշխանական եւ քաղաքական համակարգի ակնհայտ թերությունները, դեռ «որոշում» է իր տեղը:

Այս ամենը, իհարկե, տարբեր գույներ են հաղորդում քաղաքական դաշտին. յուրաքանչյուր քաղաքական ուժ, առաջնորդվելով սեփական նպատակային հեռանկարներով, ճշգրտում է իր մասնակցության չափը առաջիկա ընտրություններին, այսինքն ժողովուրդն ինչքանով կհավատա նրանց «ծրագիր-ելույթներին», եւ ինչքանով կուսակցությունը կկարողանա շոշափել նուրբ հարցեր՝ ժողովրդի սրտին դիպչող: Սակայն մի բան միշտ անհրաժեշտաբար մոռացվում է ժամանակ շահելու, գործադիրում հապճեպ տեղեր գբաղեցնելու համար, եւ որ դա պետության՝ իսկապես ժողովրդավարական, անհրաժեշտությունն է, ինչով եւ պայմանավորված են երկրի զարգացման իրատեսական տեմպերը:

Նախընտրական այս շրջանում է հենց հնարավոր քաղաքական ուժերի դեմագոգիայի կատարելագործումը: Ընդդիմությունը ձեռքից բաց չի թողնում իշխանությանը խարդախ անվանելու ցանկացած շանս, անկախ նրանից՝ օբյեկտի՞վ է դա: Դիմությունն էլ առայժմ աշխատում է տնտեսական ցուցանիշները հիմնավորել: Երանգավորվում է եւս մի տեսակ, որը, մատնանշելով իշխանական եւ քաղաքական համակարգի ակնհայտ թերությունները, դեռ «որոշում» է իր տեղը: Վերոհիշյալ իրողություններից ելնելով է այսօր կատարվում ցանկացած քայլ կամ քննադատություն՝ անկախ հասցեատիրոջից:

Խորհրդարանական մեծամասնության կարծիքով, ընտրություններից առաջ ոչ միայն պետք է բարեփոխել ընտրական օրենսգիրքն ու պետական կառավարման համակարգը, այլեւ քաղաքական ուժերը պետք է փոխադարձ հանդուրժողականություն դրսեւորեն: Խորհրդարանի փոխխոսնակ Տիգրան Թորոսյանը ակնհայտ դժգոհություն է հայտնում Եվրախորհրդարանում Հայաստանի պատվիրակության աշխատանքներից: Նրա կարծիքով, մեր պատվիրակությունը իր գործունեությունը միանշանակ է ընկալում գնալ Եվրախորհուրդ Ադրբեջանի պատվիրակների կողմից հնչեցրած մեղադրանքներին պատասխան տալու համար, մինչդեռ, ըստ Տիգրան Թորոսյանի, Եվրախորհրդին Հայաստանի անդամակցության իմաստը հստակորեն միայն իշխանություն ունեցող քաղաքական ուժն է հասկացել. «Դժբախտաբար, գիտակցությունը թույլ է եւ քաղաքական ուժերի, եւ քաղաքական գործիչների մոտ»:

Ու քանի որ մեղադրանքը կոնկրետ հասցեատեր ունի այս պարագայում, անհրաժեշտ է ճշտել, թե դա որքանով է օբյեկտիվ: ԱԺ-ի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ եւ Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի պատվիրակության ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանը, ի պատասխան Տիգրան Թորոսյանի, ասաց. «Մարդիկ, որ չեն եղել այդ մթնոլորտում, իրավունք չունեն գնահատական տալու: Ափսոսում եմ, որ Թորոսյանը նման չոր եւ միանշանակ գնահատական է տվել, մինչդեռ եվրոպական քաղաքական գործիչները ավելի զգույշ եւ հանդուրժող են: Մենք դա պետք է հաշվի առնենք: Հուսով եմ, որ Թորոսյանը կվերանայի իր կարծիքը: Ի վերջո, հիշենք, որ ժամանակին Եվրախորհրդին անդամակցելու նախաձեռնությունը քննադատում էր Հանրապետական կուսակցությունը»:

Ընդդիմադիր եռյակի բաղկացուցիչ մի մասն էլ, հանձին Արտաշես Գեղամյանի, պնդում է, որ ընտրություններից առաջ իշխանություն ունեցող քաղաքական ուժը (Հանրապետական կուսակցության) բյուջետային հիմնարկների աշխատողներին ստիպում է իրենց կուսակցության շարքերն անցնել՝ սպառնալով, որ հակառակ դեպքում այդ մարդիկ կզրկվեն աշխատատեղից: Միասնություն խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը ոչ միայն փորձում է հերքել Արտաշես Գեղամյանին, այլեւ իր պատասխանով մեղադրում է բոլոր քաղաքական ուժերին «անմաքուր» լինելու մեջ. «Բոլոր կուսակցություններն էլ բացեր ունեն, եւ եթե սկսենք բացերի փնտրտուքով զբաղվել, ապա ամենաշահավետ դիրքում Հանրապետականը կլինի»: Փոխադարձ մեղադրանքների, իրար վրա ցեխ շպրտելու ոճը, այսպիսով, ընդլայնում է իր շրջանակները վերածվելով շահարկումների եւ մի զարկով մի քանի նապաստակ սպանելու փորձի:

Այս պարագայում է հենց առավել անհրաժեշտ դառնում քաղաքական ուժերին երկրի կայունության եւ զարգացման առանցքը կազմող ամենաառաջնային գաղափարների եւ խնդիրների մասին հիշեցնելը՝ ստվերային եկամուտների շրջանառության նվազեցում, կոռուպցիայի դեմ իրական պայքար, սոցիալապես անապահով շերտի վիճակի օրենսդրորեն բարելավում եւ արտաքին քաղաքականության ոլորտում միասնական տեսակետներ ունենալու կարեւորություն:

ԴԻՄՍ

Մեկ քայլ առաջ, երկու քայլ հետ

Խորհրդարանում այս շաբաթ գումարվեց հերթական եռօրյա նիստը, սակայն, ցավոք, քննարկման տպավորություն ստեղծվեց միայն օրակարգում ընդգրկված շուրջ 4 տասնյակ օրինագծերից միայն այն հարցերի շուրջ, որոնք որոշ քաղաքական ուժերի նախընտրական քարոզչություն կատարելու հնարավորություն են տալիս: Երբեմն բանը հասնում էր նրան, որ «կրքերի շիկացման բովում» մոռացվում է բուն խնդիրը: Օրինակ, եռօրյայի հենց սկզբից «ակտիվացան» «ՀՀ Սահմանադրության» (խորհրդարանական կառավարում) համահեղինակները: Վեցյակը նախ բորբոքվեց այն որոշման նախագծից, ըստ որի առաջարկվում էր 3 ամսով երկարաձգել «ՀՀ Սահմանադրություն» օրենքի նախագծի եւ «ՀՀ Սահմանադրության փոփոխություններ» նախագծի նախնական քննարկման եւ ԱԺ-ում եզրակացություն ներկայացնելու համար խորհրդարանական հանձնաժողովի գործունեությունը: Այս որոշումը խորհրդարանը ի վերջո հաստատեց: Հիմնավորումը հետեւյալն էր քանի դեռ չի ավարտվել սահմանադրական նախագծերի քննարկումը, գլխադասային հանձնաժողովի անհրաժեշտությունը զգացվելու է, եւ որպեսզի ԱԺ նախագահը գլխադասային չնշանակի մեկ այլ հանձնաժողովի, ինչը արդյունավետ չի լինի զուտ աշխատանքային առումով, որոշվեց երկարաձգել արդեն իսկ նշանակված հանձնաժողովի գործունեության ժամկետը:

Այս ամենը վեցյակը տեղափոխեց շահարկումների դաշտ, եւ առանց լուրջ ընդդիմախոսության հնչեցին էժան ու անտրամաբանական որակումներ: Արշակ Սադոյանը կապ գտավ Հոկտեմբերի 27-ի ոճրագործության եւ գործող Սահմանադրության միջեւ. «Սահմանադրությունն էր պատճառը, որ եղավ Հոկտեմբերի 27-ը»: Վեցյակի մյուս անդամները Շավարշ Քոչարյանն ու Հրանտ Խաչատրյանը հակասեցին միմյանց: Շ. Քոչարյանն ասաց, որ ինչքան ուշանա սահմանադրական փոփոխությունների գործընթացը, այնքան երկիրը կշարունակի մնալ ճգնաժամի մեջ, իսկ Հ. Խաչատրյանը բարձրագոչ կոչ հնչեցրեց. «ԱԺ-ի պատիվը փրկելու համար պետք է վերջ տալ սահմանադրական փոփոխությունների այս գործընթացին»: Սրանից հետո միայն վեցյակը շրջանառությունից հանեց իր նախագիծը փաստելով, որ իր համար էականը քննարկումների ընթացքում դիվիդենտներ շահելն էր: Սակայն Շավարշ Քոչարյանը դա պատճառաբանեց նրանով, որ չպահպանվեց նախագծերը հաջորդաբար քննարկելու պայմանավորվածությունը: Այսպիսով, չքվեարկվեց վեցյակի նախագիծը, սակայն ցանկացած պահի այն հնարավոր է շրջանառության մեջ դնել ու քվեարկել:

Ցավոք, այս ամենի ոլորապտույտում միշտ գիտակցաբար մոռացվում է, որ Սահմանադրությունը լուրջ ու որոշիչ փաստաթուղթ է եւ որքան բարելավվի այնքան իրատեսական կդառնա ժողովրդավարության կայացումը մեր երկրում:

Մ. Հ.

ՃԵՊԱԶՐՈՒՅՑ

Խառնվեցին իրականն ու հարմարը

Խորհրդարանական բրիֆինգների հիմնական թեման, բնականաբար, հեռուստաեթերի շուրջ ստեղծած իրավիճակն էր, որի ընթացքում, իրավացի հնչող տեսակետների հետ մեկտեղ, զարմանալին որոշ պատգամավորների իրենց իսկ գրած օրենքից հրաժարումն էր: Մոռանում են, որ օրենքի այդ տեսքով ընդունումը հենց իրենք են խրախուսել ու հիմա քարկոծում են իրենց իսկ ընդունած օրենքը, որից բխող սողանքներով էլ «Ա1+»-ը հայտնվել է եթերից դուրս կարգավիճակում: Կոմունիստ պատգամավոր Գագիկ Թադեւոսյանը երեկ ԱԺ եռօրյան ամփոփող բրիֆինգների ընթացքում նույնիսկ մեղմ սեթեւեթանքով արդարացում գտավ. «Հասկանո՞ւմ եք, մենք օրենքները գրում ենք նրա համար, որպեսզի օրենքը կիրառողները ազնիվ մարդիկ լինեն: Եթե նրանք պետք է ենթարկվեն իշխանության ճնշմանը, օրենքն ի՞նչ մեղք ունի»: Իսկ ազնիվ գործադիրների հազվագյուտ լինելը Գագիկ Թադեւոսյանին հայտնի չէ:

Աղասի Արշակյանը «Իրավունք եւ միաբանություն» խմբակցության անունից իր մեղադրանքները, չգիտես ինչու, ուղղեց լրագրողներին. «լրագրողական համերաշխությունը Հայաստանում փաստորեն ճաք տվեց»: Մինչդեռ լրագրողներն անկեղծ սրտացավությամբ պաշտպանում են «Ա1+»-ի իրավունքները, սակայն ակնհայտորեն ոչ այն կոնտեքստում, որում ցանկանում է պրն Արշակյանը: Ըստ երեւույթին, նրան պետք են մամուլում տպագրվող եւ եթեր հեռարձակվող անհասցե հայհոյանքներ ու մեղադրանքներ, որպեսզի ինքը դրանք ուզածի չափ ուղղի հանրապետության նախագահի, «իշխող կլանի» ու իր հակառակորդների հասցեին եւ պահանջի նրանց շուտափույթ հրաժարականը... Ծանոթ բան է, իհարկե:

ՀՅԴ խմբակցության նախագահ Աղվան Վարդանյանը նշեց, որ ինչքան էլ փորձենք «Ա1+»-ի հարցը քաղաքականացնել, այն քաղաքական խնդիր չէ. «Հայաստանում կա ընդունված օրենք, որով էլ անցկացվել է մրցույթը»:

Բրիֆինգների ընթացքում խոսվեց նաեւ շատ ավելի կարեւոր (բառն օգտագործում եմ հույս ունենալով զերծ մնալ պատեհապաշտների մեղադրանքներից) մի խնդրի մասին. այն է սահմանադրական բարեփոխումների ձգձգումը, որի մասին Ա. Վարդանյանն ասաց. «Այսօրվա վիճակում կասկածելի եմ համարում, որ մենք մինչեւ ընտրությունները կհասցնենք ավարտել սահմանադրական փոփոխությունները: Ընթացքն ուշացավ եւ համընկավ այնպիսի մի փուլի հետ, երբ մթնոլորտը քաղաքականացված է, նախընտրական է»: Ա. Վարդանյանը համարում է, որ այսպիսի պայմաններում սահմանադրական բարեփոխումների գնալը կվտանգի այն. «Մնում է երեք տարբերակ. համատեղել տեղական կամ նախագահական ընտրությունների հետ, կամ հետաձգել»:

Գոհար ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԵՐԿԻՐ
5-11 ԱՊՐԻԼ, 2002 #11/1662/
2+1

«ՇԱՐՄ»-Ը՝ «Ա1+»-Ի ԲԱԿՈՒՄ



Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ապրիլի 2-ի նիստում որոշվեց 37-րդ դեցիմետրային հաճախականությունը շահագործելու լիցենզիան տալ «Շարմ» ընկերությանը: Վարկանիշային քվեարկության արդյունքում «Շարմ»-ի ներկայացրած ծրագիրը հավաքեց 32, մինչդեռ «Ա1+»-ինը՝ ընդամենը 21 միավոր: Ընդ որում, հանձնաժողովի նախագահն ու փեղակալը «Ա1+»-ին շնորհեցին 1-ական միավոր: Ինչո՞ւ, եւ որո՞նք են լինելու «Ա1+»-ի հետագա քայլերը: Մեր թղթակցի այս հարցերին են պատասխանում հանձնաժողովի փոխնախագահ ՇԱՄԻՐԱՄ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ եւ «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր, «Ա1+» հեռուստաընկերության «Հեղգրություն» հաղորդաշարի հեղինակ ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

- «Ա1+»-ի հեռարձակման դադարեցումն այլեւս իրողություն է: Ձեր գնահատականը:

- Կարծում եմ ցանկացած լրագրողի համար պետք է ցավալի լինի լրատվամիջոցի փակումը, իսկ կապուղուց, եթերից զրկելը հեռուստաընկերություն փակելու նման մի բան է: Պետք է ցավ զգանք բոլորս եւ, անկախ քաղաքական հայացքներից, թերթերի կամ հեռուստաընկերությունների ուղղվածություններից, պետք է համերաշխ լինենք «Ա1+»-ի հետ: Եվ եթե այսօր դեռ ոչինչ չի սպառնում գործող մյուս հեռուստաընկերություններին, ապա վաղը կարող է սպառնալ. իշխանությունները հավերժ չեն, իսկ մենք հավերժ ենք: Այսինքն, մենք մշտապես ապրելու ենք Հայաստանում, Երեւանում, քայլելու ենք այս փողոցներով: Չեմ կարծում, որ երբ Ռոբերտ Քոչարյանն այլեւս չլինի հանրապետության նախագահ, «Ա1+»-ին մեկ նշանակած հանձնաժողովի անդամները, կկարողանան Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի նման մեկնել Հայաստանից կամ Ղարաբաղից, նրանք կշարունակեն ապրել Երեւանում, եւ կանխազգում եմ նրանց դժվարությունները, թե որքան վատ կզգան փողոցում ինձ տեսնելիս եւ ստիպված կլինեն հայացքը փախցնել կամ անցնել փողոցի մյուս կողմը: Դրա համար պետք է հեռատես լինել. եկեք բոլորս հեռատես լինենք:

- «Ա1+»-ին ցածր միավորով գնահատելը հանձնաժողովի անդամներից մեկը պատճառաբանեց ներկայացված ծրագրի թույլ լինելով: Եվ նշեց, որ այն չէր նախանշում հստակ զարգացում:

- Ներկայացված ծրագրերին ծանոթ չեմ, բայց դա, իմ կարծիքով, դատարկ պատճառաբանություն է: Իրականում կատարում են Ռոբերտ Քոչարյանի պատվերը:

- Ի՞նչ հիմքով եք նման հայտարարություն հնչեցնում:

- Այն հիմքով, որ հանձնաժողովի անդամները նշանակվել են Ռոբերտ Քոչարյանի կողմից, իսկ Գրիգոր Ամալյանը մի պաշտոնյա է, որն աշխատել է նախագահի ապարատում եւ եղել Ալեքսան Հարությունյանի տեղակալը: Բնականաբար, այդ պաշտոնյան պետք է ամեն ինչ անի նախագահի աշխատակազմին հաճելի լինելու համար:

- Այսօր Ա1+-ին իրենց աջակցության, պաշտպանության հովանու տակ են վերցրել այն անձինք, որոնց իշխանության կարիքներին ջարդվել է լրատվամիջոցների գույքը, փակվել են թերթեր, լրատվական գործակալություններ: Մտավախության չունե՞ք, որ նրանց ձեռքին դառնում եք գործիք:

- Իհարկե ունեմ, լիովին համամիտ եմ Ձեր ասածներին: Եթե անգամ նրանք ապաշխարել են նախկինում թերթեր փակելու համար, ապա այդ ապաշխարանքը թող «Ա1+»-ի վրա չտարածեն եւ փակումը երեւի թե բնական քաղաքական նպատակների համար չօգտագործեն: Ինձ որպես լրագրողի, չի հետաքրքրում, թե ո՞վ է նախագահը, եւ երբ նա կփոխվի: Ինձ հետաքրքրում է իմ լրագրողական աշխատանքը, ինֆորմացիան իմ ընթերցողներին հաղորդելը: Հեռուստադիտողին հաղորդել այլեւս չի հաջողվի, եւ կարծում եմ, որ վտանգված է խոսքի ազատությունը: Քանզի, ուզենք թե չուզենք, միակ այլընտրանքային հեռուստաընկերությունը, որը գրաքննության չէր ենթարկվում, «Ա1+»-ն էր, որի բացակայության դեպքում, ինչպես իրավացիորեն նշեց մեր գործընկեր Տիգրան Նաղդալյանը, հավասարակշռությունը կխախտվի: Եվ ինչպես նախկինում, երբ իշխանությունները որոշ պատճառաբանություններ էին գտել ու կասեցրել «Գոլոս Արմենիի» տպագրությունը, «Առավոտը» նրան կամ «Երկիր»-ին էջեր էր տրամադրում, այնպես այսօր, կարծում եմ, մնացած հեռուստաընկերությունները պետք է ցուցադրեն «Ա1+»-ի արտադրանքը եւ դրանով իրենց համերաշխությունը հայտնեն, բայց այսօրինակ մոտեցում հեռուստաընկերությունների պարագայում, ցավոք, քիչ հավանական է: (Հուրախություն, նման առաջարկ Հ1-ի կողմից երեկ արվել է. -Խմբ.)

- Դեցիմետրային մյուս հաճախականությունների համար առաջիկայում հայտարարվելիք մրցույթներին «Ա1+»-ը մասնակցելո՞ւ է:

- Բնականաբար, դա Մեսրոպ Մովսիսյանի որոշելիք հարցն է: Բայց ես այդպես կանեի: Նախ, կփորձեի բողոքարկել եւ անպայման կշարունակեի աշխատանքը որպես արտադրող ընկերություն: Կմասնակցեի նաեւ մյուս կապուղիների մրցույթին ավելի ճոխ ծրագրերով, որպեսզի նման պատճառաբանություններ այլեւս չլինեին: Իսկ ժողովները, ակցիաները եւ հատկապես միտինգները երբեք տանել չեմ կարողացել, այսօր էլ տանել չեմ կարողանում եւ այդ ամեն ինչին չեմ հավատում:

ՇԱՄԻՐԱՄ ԱՂԱԲԵԿՅԱՆ

- «Ա1+» -ի ներկայացրած ծրագիրը գնահատեցիք ընդամենը 1. ինչո՞ւ, ինչո՞վ էր պայմանավորված Ձեր այդ որոշումը:

- Միայն նրանով, որ ներկայացրել էին շատ թույլ առաջարկներ ապահովելով ընդամենը նվազագույն պահանջները: Մինչդեռ «Շարմ»-ի ներկայացրած հայտում լուրջ առաջարկներ էին նախատեսված թե ներդրումների, թե տեխնիկայի, թե սեփական, հայրենական արտադրանքի գծով: Ծրագրային քաղաքականության բոլոր ասպարեզներում «Շարմ»-ը մի քանի անգամ առաջ էր անցել «Ա1+»-ից:

- Այդուհանդերձ, «Ա1+»-ը կայացած հեռուստարձակություն է, իսկ «Շարմ»-ը հայտնի է միայն շոու բիզնեսում:

- «Շարմ»-ը հայտնի է որպես հեռուստաարտադրանք տվող ընկերություն, որի արտադրանքը գրեթե բոլոր հեռուստաընկերություններն էլ օգտագործել են, ցուցադրել իրենց եթերում: Չի կարելի ասել, թե «Շարմ»-ը այս դաշտում չկա, բոլորս էլ գիտենք, որ կա: Ասում են «Ա1+»-ը գործող էր, իսկ «Շարմ»-ը ոչ, բայց Ազգային ժողովի ընդունած օրենքում նշվում է, որ դաշտը առհավետ չի կարող կենտրոնանալ նույն հեռուստաընկերությունների ձեռքերում, եւ հաճախականությունները պետք է տրվեն մրցույթով, որին կարող է մասնակցել ցանկացած իրավաբանական անձ, ինչը եւ արել է «Շարմ»-ը: Չէինք կարող «Շարմ»-ին ասել, թե հայտ մի ներկայացրու, քանզի «Ա1+»-ը գործող հեռուստաընկերություն է եւ իր գործունեությունը պետք է շարունակի այդ նույն հաճախականության վրա: Հետեւապես, «Ա1+»-ը պետք է մտածեր, որ գուցեեւ ունենա լուրջ մրցակիցներ ու հավուր պատշաճի պատրաստվեր մրցույթին, հստակեցներ, թե ինչպես է պատկերացնում իր գործունեությունը առաջիկա 7 տարիներին նորացված հեռուստադաշտում: Ինչու նորացված, որովհետեւ եթե նախկինում կապի նախարարությունն էր տալիս լիցենզիաները ուշադրություն դարձնելով միայն տեխնիկական միջոցների կամ գործավարության վրա, ապա հիմա օրենքը բոլորովին այլ հանձնարարականներ է տվել հանձնաժողովին, որոնցով ղեկավարվելով շատ ավելի բազմակողմանի եւ բարդ պայմաններ ենք առաջադրում հայտ ներկայացնողների առաջ: Նպատակը մեկն է այս դաշտը պետք է կարողանա քայլել ժամանակակից պայմաններին զուգահեռ, եւ վերջ տրվի հնագույն, կենցաղային տեխնիկայով հեռուստածրագրերի մատուցմանը:

- Կարծիքներ կան, որ հանձնաժողովը իշխանությունների ճնշմամբ է «Ա1+»-ին զրկել 37-րդ հաճախականությունից: Ձեր մեկնաբանությունը:

- Չեմ կարծում, թե այդքան ճնշվող մարդ եմ: Իմ կենսագրությունն ապացուցել է, որ ես ճնշվողներից չեմ, եւ հետո ճնշումների դեպքում, համենայն դեպս ինձ մոտ, միշտ հակազդեցություն է առաջանում: Բացի այդ, ճնշումների առկայության դեպքում անգամ որեւէ մեկը չէր համարձակվի անտեսել նորմալ առաջարկը ու գնալ փուչ թղթի հետեւից:

«Շարմ»-ը իրավաբանական անձ է, տնտեսվարող սուբյեկտ եւ ուզում է գալ դաշտ, ինչպե՞ս կարելի է այդպիսի արհեստական խոչընդոտներ դնել, դա արդեն ամբոխավարություն է, հին սովետական չափանիշներին հետեւելու արդյունք: Թող «Ա1+»-ը ներկայացներ հոյակապ առաջարկներ ու հանձնաժողովի անդամներին գամեր պատերին, բայց առաջարկները լավը չեն: Անգամ «Ա1+»-ի ազդարարի հոլովակն է անորակ, ինչպե՞ս կարելի է: Ի պատասխան իմ հարցի Մեսրոպ Մովսիսյանն ասաց, թե ուզում են դառնալ լրատվական ուղղվածության ընկերություն (այդ մասին մրցութային հայտում ոչինչ գրված չի): Բայցեւ տեղեկացրեց, որ նորությունների բլոկը փոխում են ցերեկվա ժամը 13:45-ին միայն: Կոպիտ հաշվարկներով մնում է 12 ժամ, որից հանրապետության անցուդարձին վերաբերող լուրեր են հաղորդում միայն երկու ժամը մեկ, այն էլ 15 րոպեանոց «Այբ-Ֆե»-ի թողարկումներում: Այսինքն, օրվա մեջ տեղական լուրերին տրամադրվում է միայն 1,5 ժամ: Ինչպե՞ս կարելի է դա համարել լրատվական հեռուստաընկերություն, իսկ բացի լուրերից նայելու այլ հաղորդում չկա:

- Ապրիլի 1-ին տեղի ունեցած մարաթոնի կազմակերպիչները պնդում էին, որ որոշումը կայացնելիս հանձնաժողովը պետք է հաշվի առներ նաեւ ժողովրդի, հեռուստադիտողի կարծիքը:

- Օրենքով նման բան նախատեսված չէ, այլեւ մատնանշված են հստակ չափորոշիչներ, որոնցով էլ առաջնորդվել ենք: Օրենքում գրված չի, թե պետք է հիմք ընդունել ժողովրդի կարծիքը եւ անտեսել այն օբյեկտիվ պահանջները, որոնք մրցութային հայտով պետք է ներկայացվեն: Եթե օրենսդիրը նման բան նախատեսեր ծիծաղի առարկա կդառնար:

- Իսկ ինչպե՞ս է հանձնաժողովը վերահսկելու «Շարմ»-ը իրականացնո՞ւմ է թղթի վրա գրված իր գեղեցիկ ծրագիրն ու խոստումները, թե՞ ոչ:

- Դրա համար ունենք մոնիտորինգի եւ վերահսկողության վարչություն: Մրցույթին ներկայացված հայտը, որը հաղթանակ է բերել «Շարմ»-ին կամ մեկ այլ ընկերության դառնում է նաեւ լիցենզիայի նախապայման, որի իրականացմանը խստագույնս հետեւելու ենք: Եվ եթե «Շարմ»-ը կամ մեկ ուրիշը դրան հետամուտ չլինի, ապա օրենքով եւ ենթաօրենսդրական ակտերով նախատեսված են մի շարք պատժիչ միջոցներ ընդհուպ լիցենզիայից զրկելը: Օրինակ, եթե «Շարմ»-ը հեռարձակումը սկսի 6 ամսից ավելի ուշ, կարող է զրկվել լիցենզիայից:

«ԵՐԿԻՐ»

Այն, որ «Ա1+» հեռուստաընկերությունը վերջին տարիներին առանձնապես նորարարություններ չէր մտցրել իր եթերում եւ, կարծես բավարարվելով ձեռք բերածով, շարունակում էր դոփել նույն տեղում գրեթե վիճարկման ենթակա չէ: Բայց, այդուհանդերձ, փաստ է նաեւ այն, որ «Ա1+»-ը կայացած հեռուստաընկերություն է եւ հնարավորություն էր ընձեռում հեռուստադիտողին ծանոթանալ օրվա ողջ խճանկարին, թեկուզեւ փոքր-ինչ խտացված գույներով կամ խիստ սուբյեկտիվ մեկնաբանություններով: Անգամ սա չի կարելի ասել «Շարմ»-ի մասին: Ճիշտ է, «Շարմ»-ը անհայտ ընկերություն չէ, բայց շոու բիզնեսի բնագավառում: Եվ ոչ ոք չի կարող երաշխավորել, որ թղթի վրա գրված գեղեցիկ ծրագրերը նույնքան գեղեցիկ կիրագործվեն, կամ գոնե կապահովվի այն նվազագույնը, ինչին հաջողվել էր հասնել «Ա1+»-ին: Իհարկե, դեմ չենք նաեւ նոր դեմքերին, նոր հեռուստաընկերություններին, բայց նրանց եթեր տրամադրելը ի հաշիվ կայացած հեռուստաընկերությունների, չենք կարծում, թե կնպաստի հեռուստադաշտի կայացմանը: Շատ ավելի լավ կլիներ, եթե հանձնաժողովը հնարավորություն ընձեռեր կայացած հեռուստաընկերություններին մրցակցել միմյանց հետ, իսկ թղթի վրա գրված գեղեցիկ սցենարներին ու ծրագրերին միմյանց հետ: Այդ դեպքում համոզված ենք, որ չէր լինի այսօրինակ շահարկումների պատճառ եւ առիթ, որ լրատվամիջոցներ փակած, դրանց գրասենյակները ջարդ ու փշուր արած արասահակյաններն ու դավիթշահնազարյանները խոսքի ազատության երաշխավորի դերում հանդես գալու հավակնություններ դրսեւորեն եւ փորձեն մեր գործընկերներին իբրեւ խաղաքարտ օգտագործել իրենց քաղաքական նպատակների համար: Վիրավորական է, երբ լրատվամիջոցին աջակցողի դերում հանդես են գալիս այդօրինակ, բարոյական նկարագիր չունեցող անձինք:

Եվրոպական ընտանիքի անդամ դառնալու ցանկություն ունեցող Հայաստանի իշխանությունները պարտավոր են բազմակարծության համար ապահովել բոլոր անհրաժեշտ պայմանները:

Մաքսատնային ռեկետ

Մաքսատունը երկրի դեմքն է: Նայած այն հանգամանքին, թե օտարերկրացին ինչ վերաբերմունքի կարժանանա այստեղ, նրա մեջ համապատասխան տպավորություններ ու զգացումներ կձեւվեն տվյալ երկրի ու ժողովրդի հանդեպ: Պատահական չէ, որ քաղաքակիրթ երկրներն այս խնդրին մեծ ուշադրություն են դարձնում, մի բան, որով այդ երկրները առավել գրավիչ են դառնում զբոսաշրջիկների եւ գործարարների համար:

Էդ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Իրանահայ համայնքը ՀՀ անկախացումից հետո լայն քարոզչություն է ծավալել ի նպաստ Հայաստանի՝ որպես ազատ ու լուսավոր մի երկրի, բայց, ցավոք, մեր բնօրրանը ոտք դնող ամեն մի այցելու ստիպված է լինում ենթարկվել զանազան փորձությունների, որոնք նախատեսված չեն եւ ոչ մի երկիր այցելելիս:

Այս ոլորտում մենք շատ բան ունենք սովորելու օտարներից, անգամ նրանցից, ովքեր չեն շատ հեռու են ողջ աշխարհին հայտնի հայկական հյուրընկալության կանոններից:

Խնդրին անդրադառնալու առիթ հանդիսացավ օրերս «Երկիր»-ի խմբագրություն այցելած Իրանի Իսլամական Հանրապետության երկու քաղաքացիների բողոքը: Իրանցի ազգակիցները հավաստիացրին, որ Մեղրու մաքսատանը տիրող իրավիճակը պարզապես անթույլատրելի է:

Բանն այն է, որ իրանահայ համայնքը ՀՀ անկախացումից հետո լայն քարոզչություն է ծավալել ի նպաստ Հայաստանի՝ որպես ազատ ու լուսավոր մի երկրի, բայց, ցավոք, մեր բնօրրանը ոտք դնող ամեն մի այցելու ստիպված է լինում ենթարկվել զանազան փորձությունների, որոնք նախատեսված չեն եւ ոչ մի երկիր այցելելիս: Հատկապես Մեղրու մաքսային անցակետում միջազգային բոլոր չափանիշներն են անտեսված: Համեմատության համար ասենք, որ 20-25 մարդ տեղափոխող ավտոբուսների ուղեւորների եւ բեռների ստուգումը իրանական կողմում տեւում է 15-20 րոպե, իսկ մեր կողմում՝ 5-6 ժամ:

Ինչն է պատճառը. պետական մտածողության ու մարդկային վերաբերմունքի դեֆիցիտը: Ի դեպ, դա չի մտնում այցելուների ծրագրերի մեջ: Նրանք, օրինակ, դժվարությամբ են հասկանում մաքսատան պաշտոնյայի հետեւյալ բազմանշանակ հայտարարությունը. «Անցումը, եթե ամեն ինչ օրինական արվի, ձեզ վրա կնստի 8,5 հազար դրամ: Տվեք 15 հազար եւ արագ ու անարգել անցեք, ավելորդ ստուգումներ չեն լինի»:

Երբ Իրանի քաղաքացին անձնական օգտագործման մեքենայով է փորձում անցնել սահմանը, նայած մեքենայի արժեքին, լրացուցիչ 2-3 հազար թուման են պահանջում: Գումարն ստանալուն պես գրպանն են դնում՝ առանց մտահոգվելու, որ պետական սահմանի վրա պետական պաշտոնյան պարտավոր է միայն տվյալ պետության արժույթով գործարքներ կատարել: Այստեղ թումանով էլ են վերցնում, դոլարով էլ, դրամով էլ: Որեւէ անդորրագրի մասին խոսք չկա: Ժամերով սպասող օտարերկրացին էլ դրա ժամանակը չունի: Նա շտապում է օրվա լույս ժամերին անցնել Քաջարանի լեռնանցքը: Հատկապես ձմռան ամիսներին հաճախակի մառախուղը եւ սառած ասֆալտը վտանգավոր են դարձնում նրանց:

Նոր կառուցված կամուրջը եւ մաքսատան շենքը Լույս էլին ներշնչել, թե առաջիկայում ամեն ինչ կարվի անցումն արագացնելու եւ, ի հաշիվ ստուգող սարքավորումների ու համակարգիչների, սպասարկման մակարդակը բարձրացնելու համար: Բայց ոչ, հայկական կողմն անդրդվելի է: Չկա ամենատարրական մի սպասասրահ, որտեղ մարդիկ կարողանան մի փոքր հանգստանալ ուղեկալի ողջ տարածքով ուղերեռը քարշ տալուց հետո, կամ անցկացնել սպասումի երկար ժամերը: Ուղղակի խմբվում են մաքսատան բակում, թե ձմռան ցրտին, թե ամռան տապին:

Բացակայում են ամենատարրական ծառայությունները: Ընդունված կարգի համաձայն, ուղեւորը ճամպրուկներն անձամբ է տեղափոխում: Իրանի մաքսատանը այդ նպատակով աշխատում են բեռնակիրներ, որոնք ուղեբեռը սայլակով մինչեւ սահմանագիծ են հասցնում: Սահմանագծից այս կողմ, ուղեկալի ողջ տարածքով (մոտ 200 մ) զբոսաշրջիկն ստիպված է ձեռքով քարշ տալ ճամպրուկները մինչեւ Մեղրու մաքսատուն: Ուղղակի զավեշտ է, մի՞թե տեղի բնակչության շրջանում զբաղվածության մակարդակն այնքան բարձր է, որ մի քանի բեռնակիր չի ճարվում այս գործի համար: Սա դեռ ամբողջը չէ: Ուղեկալը ռուս սահմանապահների վերահսկողության տակ է: Այդ հատվածում Իրանի քաղաքացին, որն իր լեզվից բացի լավագույն դեպքում նաեւ հայերեն գիտի, առանց թարգմանչի ոչ մի կերպ չի կարողանում հաղորդակցվել իրեն ռուսերեն հարցուփորձ անող սահմանապահների հետ:

Չենք կարծում, թե նման արգելքներ հաղթահարելուց հետո (ի դեպ, այս ամենը կրկնվում է նաեւ Հայաստանից մեկնելիս) որեւէ օտարերկրացի երկրորդ անգամ փորձի բախել մեր երկրի դռները, մինչդեռ տուրիզմի ու գործարար կապերի զարգացման համար կարեւոր է, որ արդեն մեկ անգամ Հայաստան այցելած օտարերկրացին հեռանա միայն լավագույն հիշողություններով ու վստահ, թե մյուս հանդիպումը կրկին առիթ է ունենալու կայացած պետականության եւ միջազգային չափանիշների օրինականության հետ առնչվելու:

ՆՈՐԵՐ

Ո՞րն է խաղաղության գինը

Սույն հարցադրումը օրինաչափորեն առաջ եկավ այն բանից հետո, երբ ապրիլի 3-ին ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությունում հրավիրված համատեղ ասուլիսի ժամանակ

Նախարար Անդրանիկ Մանուկյանը եւ «ԱրմենՏելի» ղեկավար Նիկոս Յորդուլասը հայտարարեցին սակագների իջեցման շուրջ ձեռք բերված փոխզիջումային համաձայնության մասին:

«Երկիր»-ի ուղղակի հարցին, հնարավո՞ր է, արդյոք, որ փոխզիջման արդյունքում ՀՀ կառավարությունը մեղմացնի իր դիրքորոշումը եւ խոստովանի 127 մլն դոլար ներդրումների մասին «ԱրմենՏելի» վիճահարույց հայտարարության իսկությունը, պրն Մանուկյանը տվեց բավական ուշագրավ պատասխան: Բանախոսի հավաստմամբ, սակագնային փոխզիջումները որեւէ ուղղակի կապ չունեն այն տարաձայնությունների հետ, որ առկա են «ԱրմենՏելի» կատարած ներդրումների խնդրի շուրջ: «Ոչ «ԱրմենՏելը», ոչ էլ մենք չենք հրաժարվում մեր դիրքորոշումներից: «ԱրմենՏելը» պնդում է, որ կատարել է, մենք պնդում ենք, որ այդ չափի ներդրում չի կատարվել: Այս հարցերը կլուծվեն դատական կարգով»,- նկատեց նախարարը միաժամանակ հորդորելով «այսօրվա լավ առիթը չխառնել դրա հետ»: Նախարարի հորդորին առայժմ արժե ականջալուր լինել: Ասում ենք առայժմ, քանզի «ո՞րն է խաղաղության գինը» հարցի ճշգրիտ պատասխանը հնարավոր կլինի պարզել «ԱրմենՏելի» գործունեությունն ուսումնասիրող միջգերատեսչական հանձնաժողովի եւ դատախազության վերջնական եզրակացությունների հրապարակումից հետո:

Սեփ. լր.

Միայն «կանաչ ճանապարհը» քիչ է

Վերջին տարիներին ՀՀ գյուղատնտեսությունը դրսեւորում է անկման որոշակի միտումներ: Պարզ համեմատությունն անգամ ցույց է տալիս, որ, օրինակ, 1995-ի 38,7 տոկոսի դիմաց 2000 թվականին այս ոլորտի տեսակարար կշիռը ՆՆԱ-ում կազմել է 23,2 տոկոս:

Սույն նահանջը, ավաղ, գործադիրի կողմից հաճախ պատճառաբանվում է տեւական անբարենպաստ կլիմայական «անակնկալներով», ինչը թեեւ ոչ դժվար է ամբողջովին ժխտել: Սակայն նույնքան դժվար է չնկատել, որ առկա վիճակը արդյունք է ոլորտի կարեւորագույն, շուկայական ինստիտուտի՝ ֆերմերային տնտեսության բնրկայացածության:

Այս կարծիքի օգտին են խոսում մի շարք փաստեր: Օրերս ՀՀ գյուղնախարարության գյուղատնտեսական արտադրության գլխավոր վարչության պետ Ալֆրեդ Խաչատրյանի հետ զրույցի ընթացքում հնարավոր եղավ պարզել, որ 312 հազար գյուղացիական տնտեսություններից միայն 12 հազարն են քիչ թե շատ համապատասխանում ֆերմերային տնտեսության ժամանակակից սահմանմանը: Իհարկե, պրն Խաչատրյանի համոզմամբ, այսօր ՀՀ-ում առկա են նաեւ ոչ քիչ թվով իսկապես կայացած ֆերմերային տնտեսություններ, սակայն առկա դանդաղ գործընթացն ստիպում է նաեւ խոստովանել, որ «եթե տնտեսությունների խոշորացումը չակտիվացվի, ապա մենք շատ ուշ կհասնենք ակնկալվող դրական արդյունքներին»:

Սակայն ո՞րն է ելքը: Վարչության պետի համոզմամբ, գյուղնախարարության քաղաքականության եւ իրականացվող ծրագրերի հիմքում դրված է «կանաչ ճանապարհ ֆերմերին» սկզբունքը: Այդուհանդերձ, ըստ պրն Խաչատրյանի, սոսկ «կանաչ ճանապարհը» ֆերմերային տնտեսության կայացման համար շատ քիչ է: Անհրաժեշտ է պետության թեկուզ անուղղակի, բայց հետեւողական, նախաձեռնողի մասնակցությունը անհրաժեշտ նախադրյալների ապահովման հարցում: Այդպիսի նախադրյալներից են, մասնավորապես, մատչելի եւ երկարաժամկետ վարկերի, անհրաժեշտ սերմացուների ու թունաքիմիկատների տրամադրման մեխանիզմների ապահովումը, ինչպես նաեւ ոռոգման, իրացման շուկաների եւ ապահովագրական օղակի համակարգերի ձեւավորումը:

«Իմ կարծիքով, այսօր պետությունը պետք է իր թեկուզ սուղ միջոցներից վարկեր տրամադրի կայացման փուլում գտնվող խոշոր ու միջակ ֆերմերներին, որպեսզի նրանք այլեւս իրենց հույսը չկապեն դրսի օգնությունների հետ եւ հասկանան, որ ընկած տեղից կարող են բարձրանալ միայն սեփական ուժերին ապավինելով»,- հավաստիացրեց պրն Խաչատրյանը ըստ էության հաստատելով այն միտքը, որ հայ գործադիրը բավական լուրջ թերացումներ ունի այս ոլորտում վարկային քաղաքականության իրականացման առումով: Եվ ոչ միայն:

Արտաքին ապրանքային վարկավորումների բացակայության պատճառով ընթացիկ տարվա գարնանացանը կատարվելու է միայն ֆերմերների ունեցած սերմացուով, որոնց գները, ի դեպ, արտադրության փոքր ծավալների պատճառով բավական բարձր են: Ասել կուզի սերմնարտադրությունը հարկ է դիտարկել որպես ռազմավարական առաջնահերթություն: Ճիշտ է, ներկայումս արդեն մշակման փուլում են «Սերմնաբուծության մասին» օրենքը եւ հայեցակարգը, այդուհանդերձ, առնվազն տարօրինակ է թվում, որ 2002 թվականի պետական բյուջեում անգամ մեկ դրամ չի նախատեսվել այս ոլորտի համար:

Այսքանից հետո մնում է պարզել առնվազն մեկ հարց. որքանո՞վ է տրամաբանական պետական ծրագրերում եւ գործադիրի տարեկան հաշվետվություններում հատուկ մատնանշել ֆերմերային տնտեսությունների հույժ կարեւորության, նաեւ պարենային անվտանգության ու տնտեսական աճի կայուն տեմպերի մասին, եթե գյուղատնտեսության առանցքային ինստիտուտը տակավին «կաղում» է միանգամից «երկու ոտքից»:

Տիգրան ՍԻՄՈՆՅԱՆ

Սփյուռքը՝ տնտեսության զարգացման հզոր աղբյուր

Մայիսի 27-29-ը Երեւանում կայանալու է Հայաստան-Սփյուռք համահայկական երկրորդ համաժողովը: Նախորդ համաժողովը, չնայած Սփյուռքի գործարարների լայն ներկայացվածությանը, մեծածավալ ներդրումների ներգրավման առումով շոշափելի արդյունքներ չի տվել. Սփյուռքը առայժմ ձեռնպահ է Հայրենիքում ներդրումներ անելու հարցում: Ակնկալվում է, որ հերթական համաժողովը կարող է շրջադարձային լինել նախորդների համեմատ: Ի պատասխան Հայաստանի տնտեսության զարգացման գործում Սփյուռքի դերի ակտիվացման մասին «Երկիր»-ի հարցերի, իր նկատառումներն է ներկայացնում Համաշխարհային բանկի՝ Հայաստանի գծով գլխավոր տնտեսագետ ԼԵՎ ՖՐԵՆԿՄԱՆԸ:



- Միջազգային փորձը որքանո՞վ է նպաստավոր Սփյուռք-Հայաստան տնտեսական փոխհարաբերությունների աշխուժացման ու զարգացման առումով:

- 20-րդ դարի երկրորդ կեսին մի շարք երկրներ կարողացել են իրենց բազմաքանակ սփյուռքի հետ ունեցած կապերը շահեկանորեն վերածել զարգացման ռեսուրսի: Այդ տեսանկյունից հատկանշական են Չինաստանի եւ Իսրայելի օրինակները: Այդ երկրների զարգացման գործում լուրջ դեր են խաղացել ոչ միայն սփյուռքից կատարված դրամական փոխանցումները, այլեւ նրա միջոցով մեծածավալ ուղղակի ներդրումների ներգրավումը: Ընդ որում, սփյուռքի հետ ունեցած հայրենակցական ու մշակութային առնչությունները վճռորոշ դեր են խաղացել նաեւ այդ երկրների տնտեսությունների համաշխարհային տնտեսությանը ինտեգրման առումով:

Սփյուռքի պոտենցիալի լավագույն օգտագործման ցայտուն օրինակներ կան նաեւ Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի մի շարք երկրներում, մասնավորապես Լեհաստանում, Սերբիայում, Մերձբալթյան հանրապետություններում:

Հայաստանը եւս մեծ շանսեր ունի դասվելու այդ երկրների շարքին շնորհիվ լավ կազմակերպված, կրթված ու գործարար առումով հաջողակ Սփյուռքի ներուժի օգտագործման:

- Կարո՞ղ է, արդյոք, հայկական սփյուռքը Հայաստանի տնտեսական զարգացման հարցում խաղալ նույն դերը:

- Կարելի է ասել, որ հայկական սփյուռքը հնարավորությունների առումով գրեթե չի զիջում նշված երկրների սփյուռքին: Թերեւս, շուկային անցման ելակետային պայմանները Հայաստանում ավելի վատը չէին, քան, ասենք, Իսրայելում: 90-ական թվականների սկզբների Հայաստանի պայմանները հար եւ նման էին 50-ական թվականների Իսրայելի պայմաններին: Կարելի է ապացուցել, որ համեմատած այդ երկրի հետ, շուկային անցնելու հայաստանյան փորձը բավականին հաջողված է: Հայաստանը անցյալում համարվում էր ԽՍՀՄ-ի «սիլիկոնային» հովիտը, որտեղ կենտրոնացված էին բարձրտեխնոլոգիական արդյունաբերության բազմաթիվ արտադրություններ: Դա կարեւոր նախապայման էր շուկային հաջող անցնելու համար: Հաջող անցմանը կարող էր նպաստել նաեւ համեմատաբար զարգացած ենթակառուցվածքների առկայությունը: Վերջապես, դրան կարող էր նպաստ բերել եւ ավանդաբար հայերին բնորոշ աշխատանքային բարձր բարոյականությունը:

Իհարկե, հաջող անցմանը պետք է նպաստեր նաեւ բարգավաճ Սփյուռքը, որը զարգացման յուրօրինակ ռեսուրս է: Նրանք առաջին հերթին ԱՄՆ-ի ավելի քան մեկ միլիոն հայերն են, Եվրոպայի, Մերձավոր Արեւելքի եւ Լատինական Ամերիկայի գրեթե նույնքան հայությունը: Բացի դրանից, Հայաստանը կարող էր ակնկալել հիմնական գործընկեր երկրում՝ Ռուսաստանում ապրող ավելի քան 1,5 մլն հայերի օժանդակությունը:

Այդուհանդերձ, շուկային անցման 10-ամյա փորձը առանձնապես գոհացնող չէ: 2000 թ. Հայաստանի տնտեսությունը կարողացել է վերականգնել մինչանկախական ժամանակների մակարդակի ընդամենը երկու երրորդ մասը: Տնտեսության մեջ առկա տնտեսական աճը բավական հեղհեղուկ է, թույլ են ներդրումները եւ արտահանման հնարավորությունները, բնակչության 55 տոկոսը աղքատ է, իսկ աշխատուժի 30 տոկոսը՝ գործազուրկ: Մյուս կողմից, բնակչության առնվազն 20 տոկոսն արտագաղթել է, ընդ որում, մեկնածների առնվազն 30 տոկոսն ունի բարձրագույն կամ մասնագիտական կրթություն: «Ուղեղների արտահոսքը», այդպիսով, երկիրը զրկում է երկարաժամկետ զարգացման ռեսուրսներից:

Արտաքին ներդրումների առումով եւս վիճակը բարվոք չէ: 1995-1999 թթ. բնակչության շնչի հաշվով Հայաստանը ստացել է ընդամենը 30 դոլարի ներդրում, այն դեպքում, երբ, ասենք, Լիտվան եւ Սլովենիան ստացել են 100 դոլար, իսկ Էստոնիան, Հունգարիան եւ Չեխիան՝ 200 դոլար:

- Մինչ այժմ ինչպիսի՞ն է եղել Սփյուռքի օժանդակությունը:

- Հաշվի առնելով Հայաստանում ձեւավորված օբյեկտիվ իրողությունները՝ Սփյուռքը հիմնական ջանքերը կենտրոնացրել էր մարդասիրական օգնության շոշափելի քանակներ առաքելու վրա, Սփյուռքի կառույցները ակտիվ լոբբիստական աշխատանքներ են տարել ԱՄՆ կառավարության կողմից մարդասիրական օգնության հատկացման հարցում, քաղաքական լուրջ աջակցություն են ցուցաբերել Հայաստանի հարափոփոխ կառավարություններին եւ այլն: Թերեւս, այդ բոլոր բնագավառներում Սփյուռքի ջանքերը հաջողությամբ են պսակվել:

Միեւնույն ժամանակ, այս ընթացքում հայկական Սփյուռքի ներկայացուցիչները ձեռնպահ են մնացել Հայաստանի ամենօրյա տնտեսական եւ քաղաքական կյանքին մասնակցությունից: Սփյուռքի գործարարների կողմից Հայրենիքում ներդրումներ անելու փորձերի զգալի մասը ձախողվել է պաշտոնատարների, մեղմ ասած, ոչ բարյացկամ վերաբերմունքի պատճառով: Մյուս կողմից, Սփյուռքի գործարար միավորումները հետեւողական ջանքեր չեն կիրառել իրենց անդամների շահերը պաշտպանելու հարցում: Սփյուռքյան կառույցները, մտահոգված լինելով արտերկրում հայաստանյան կառավարությունների հեղինակությամբ, ձեռնպահ են մնացել նրանց քննադատությունից:

- Իսկ ինչպիսի՞ն կարող է լինել Սփյուռքի դերը այս փուլում:

- Կուզենայի հավատալ, որ Սփյուռքի մասնակցությունը Հայաստանի զարգացման գործում կարող է դառնալ ավելի առարկայական: Սփյուռքի ֆինանսական հնարավորությունները եւ քաղաքական աջակցությունը պետք է նպաստեն դրան, եւ ոչ թե, կամա-ակամա, խանգարեն:

Նորանկախ Հայաստանին Սփյուռքի տասնամյա օգնության փորձից հիմնական հետեւությունն այն է, որ եթե լայնամասշտաբ մարդասիրական օգնությունը չի զուգակցվում ակտիվ ներդրումային ծրագրերով ու գործարար օժանդակությամբ, ապա նման օգնությունը կենսունակ չէ: Դա, ի վերջո, հանգեցնում է տնտեսական ուժի կենտրոնացմանը: Եթե Սփյուռքի գործարար հանրության համար հայրենիքում լիարժեք գործունեություն ծավալելու հնարավորություններ չեն տրվում, ապա նրա՝ երկրի կառավարությանը տնտեսապես եւ քաղաքականապես աջակցելու ջանքերը իմաստազրկվում են: Մյուս կողմից, Սփյուռքի՝ լայնամասշտաբ մարդասիրական օգնության տրամադրումը՝ առանց նույնքան ծավալուն մասնավոր ներդրումների, անպատասխանատու եւ անհեռանկար ռազմավարություն է:

Հայաստանի տնտեսությանը սփյուռքի օժանդակության նոր մոտեցումները կարող են խարսխված լինել փոխադարձ շահերի վրա: Սփյուռքի ներդրումների աշխուժացման արդյունավետ միջոցներ կարող են դառնալ ներդրումային ընդհանուր ռիսկը միմյանց միջեւ բաժանող ֆինանսական կառույցները՝ զարգացման բանկերը եւ ներդրումային հիմնադրամները: Այսպիսի հաստատությունները կարող են օժանդակել նոր ընկերությունների ստեղծմանը, դյուրին դարձնել մուտքը շուկաներ եւ այլն: Բացի այդ, Հայաստանի տնտեսության զարգացման հարցում շատ օգտակար կարող է լինել Սփյուռքի հարուստ գործարար փորձի եւ շուկայավարման հմտությունների փոխանցումը:

Զրույցը վարեց Շ. Մինասյանը

Եթե Սփյուռքի գործարար հանրության համար հայրենիքում լիարժեք գործունեություն ծավալելու հնարավորություններ չեն տրվում, ապա նրա՝ երկրի կառավարությանը տնտեսապես եւ քաղաքականապես աջակցելու ջանքերը իմաստազրկվում են: Մյուս կողմից, Սփյուռքի՝ լայնամասշտաբ մարդասիրական օգնության տրամադրումը՝ առանց նույնքան ծավալուն մասնավոր ներդրումների, անպատասխանատու եւ անհեռանկար ռազմավարություն է:

ԼՈՒՐԵՐ

Ֆաշիստական արժեթղթերը՝ բանկային ակտի՞վ

«Բանկային համակարգը եւ հասարակությունը» թեմայով ՀՀ Կենտրոնական բանկում ապրիլի 3-ին կայացած քննարկումների ժամանակ ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանը բավական բարդ համարեց «Միավորված բանկում» առկա վիճակը: «Միավորված բանկը» մեր ամենացավոտ խնդիրներից է: Պրոբլեմն այն է, որ բանկի գործունեությունը հիմնականում դատախազության ուսումնասիրությունների նյութ է: Ամեն օր նոր-նոր փաստեր ենք հայտնաբերում եւ ուղարկում դատախազություն: Այնտեղ զարմանալի բաներ են կատարվել: Օրինակ, ֆաշիստական Գերմանիայի արժեթուղթը այստեղ հաշվառվել է որպես ակտիվ: Ընդհանուր գումարը մի քանի միլիոն դոլար էր կազմում: Անհասկանալի է, թե ինչպես կարելի է ֆաշիստական Գերմանիայի արժեթուղթը հաշվառել, այն էլ մի քանի միլիոն դոլարի չափով ...», -նշեց ԿԲ նախագահը թերեւս ոչ պատահաբար անտեսելով մի օրինաչափ հարցի պատասխան իսկ ինչո՞ւ է այդ մասին ԿԲ-ն տեղեկանում միայն այն ժամանակ, երբ, այսպես ասած բանը բանից անցել է:

Սեփ. Լր.

Առեւտրային կենտրոն Երեւանում

Ապրիլի 4-ին Կալիֆոռնիայի նահանգային խորհրդարանը միաձայն ընդունել է Երեւանում Կալիֆոռնիայի առեւտրային պալատ հիմնելու մասին օրինագիծը: Հայաստանում բացվող այս ներկայացուցչությունը դառնալու է Արեւելյան Եվրոպայի, ԱՊՀ երկրների ու Կենտրոնական Ասիայի երկրների եւ Կալիֆոռնիայի նահանգի գործարար շրջանակների համագործակցությունը խթանող ու զարգացնող կենտրոն, եւ կարեւոր է, որ նման պալատը հիմնվում է Հայաստանում: Այս ծրագիրը իրականացնելու ուղղությամբ ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը երկար ժամանակ աշխատանք էր տանում, եւ նույն նպատակով անցյալ տարվա ավարտին Վարդան Օսկանյանը Կալիֆոռնիայի նահանգապետի հետ կնքել էր առանձին համաձայնագիր:

Օրինագիծը ներկայացրել էր սենատոր Ջեք Սքոթը, որը մարտի 25-28-ը ՀՅ Դաշնակցության հրավերով գտնվում էր Հայաստանում եւ տեսակցություններ էր ունեցել Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաների հետ քննելու հիշյալ խնդրի հետ կապված մանրամասնությունները:

Խճճված որդեգրում

Յանկացած երեխայի համար շատ ավելի գերադասելի է ապրել եւ մեծանալ ընտանիքում՝ թեկուզ ոչ այնքան ապահովված, քան թե մանկությունն անցկացնել մանկատանը՝ որքան էլ այնտեղ լավ լինեն պայմանները: Միանշանակորեն այս կարծիքին են երեխաների հետ առնչվող բոլոր մասնագետները՝ բժիշկներ, հոգեբաններ, մանկավարժներ, մանկատների աշխատակիցներ եւ այլն:

Նաիրա ՊՈՂՈՍՅԱՆ

Օրենքում խոցելի տեղ է այն, որ հստակեցված չէ որդեգրման ենթակա նորածիններին սոցապնախարարությունում անմիջապես հաշվառման ներկայացնելու մասին դրույթը, ինչի հետեւանքով երեխան կարող է ամիսներով մնալ ծննդատանը եւ ոչ օրինական գործարքների առիթ ստեղծել:

Հասարակության մեջ կան նաեւ անզավակ ընտանիքներ, ինչը պակաս ծանր կացություն չէ: Նման պարագայում երեխայի որդեգրումը երկուստեք շահավետ է: Այդ նպատակով 2000 թ. ՀՀ կառավարությունը որդեգրման գործընթացը կանոնակարգելու որոշում է ընդունել: Ըստ ընդունված կարգի, որդեգրումը մեր երկրի քաղաքացիների համար կատարվում է մարզպետարանների եւ քաղաքապետարանի միջոցով, իսկ դրսի քաղաքացիների համար՝ հանրապետական հանձնաժողովի:

Որդեգրումը գաղտնի գործընթաց է եւ ենթակա չէ հրապարակման, սակայն ներկայացնենք, թե ինչ ճանապարհ պիտի անցնի այդ ընթացքում, ասենք, արտասահմանցի որդեգրողը: Համապատասխան երկրում ՀՀ հյուպատոսարանի միջոցով նա դիմում է հանրապետական հանձնաժողովին: Դիմումի փաթեթը պարտադիր թարգմանվում է հայերեն: Հանձնաժողովի՝ դիմումը ուսումնասիրելուց եւ դրական եզրակացություն տալուց հետո որդեգիրը դիմում է սոցապնախարարությանը՝ որդեգրվող երեխայի մասին տեղեկություններ ստանալու համար: Սոցապնախարարության համապատասխան բաժինը, իր հերթին, երեխայի ընտրության նպատակով դիմում է տվյալ համայնքին, համայնքը՝ կառավարությանը: Այնուհետեւ վերջինս իր թույլտվությունը հետ է ուղարկում համայնքին, եւ վերջապես կատարվում է որդեգրման վերջնական գործողությունը:

Սոցապնախարարության ընտանիքի հիմնահարցերի վարչության գլխավոր մասնագետ Լենա Հայրապետյանն ասաց, որ որդեգրման ենթակա յուրաքանչյուր երեխա հաշվառված է իրենց մոտ: Նա նաեւ հայտնեց, որ որդեգրում են հիմնականում 1-5 տարեկան երեխաների, մեծ թիվ է կազմում որդեգրումը ազգակցական ընտանիքների միջեւ: Անցյալ տարի, պաշտոնական տվյալներով, որդեգրվել է 161 երեխա: Հայաստանի երեխաներին հիմնականում որդեգրում են Կանադայից, ԱՄՆ-ից, Իրանից, Ֆրանսիայից եւ Բելգիայից: Ըստ կանադացիների՝ հայ երեխաները գերադասելի են, քանի որ շատ ավելի առողջ եւ ամուր են գենետիկորեն, քան, ասենք, սլավոնական երկրներում, ուր մեծ թիվ են կազմում նարկոմանիայով զբաղվողները, ծխախոտ օգտագործող հղի կանայք եւ հարբեցողները:

Խոչընդոտո՞ւմ է գործող կարգը որդեգրմանը, թե՞ օգնում: Կառավարության սոցիալական վարչության պետ Արամ Կարապետյանը օրենքում խոցելի տեղ է համարում այն, որ հստակեցված չէ որդեգրման ենթակա նորածիններին սոցապնախարարությունում անմիջապես հաշվառման ներկայացնելու մասին դրույթը, ինչի հետեւանքով երեխան կարող է ամիսներով մնալ ծննդատանը եւ ոչ օրինական գործարքների առիթ ստեղծել:

Ամենամեծ խոչընդոտը, սակայն, ավելորդ թղթաբանությունն է, որն անտեղի ժամանակ ու նյարդեր է խլում: Որդեգրողը հաճախ անհարկի քաշքշուկից խուսափելու նպատակով գերադասում է շրջանցել հաստատված կարգը՝ թեկուզ ավելորդ գումարներ վատնելու գնով: Այսպես, որդեգրողը առնվազն 11 փաստաթուղթ պիտի ներկայացնի հանձնաժողովին, այդ թվում՝ տեղեկանքներ բնակարանային պայմանների եւ ընտանիքի կազմի, աշխատավայրից՝ զբաղեցրած պաշտոնի եւ աշխատավարձի մասին, առնվազն երեք անձանց կողմից տրված վստահության բնութագիր, ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան, եկամուտների վերաբերյալ հարկային տեղեկանք: Ակամա հարց է առաջանում՝ եթե տվյալ անձը ունենար սեփական երեխաներ, նրանից երբեւէ կպահանջե՞ն նման փաստաթղթեր:

Կարծում ենք՝ եթե ավելորդ տեղեկանքների պատճառով որդեգրողը ստիպված չլինի բազմապիսի դռներ թակել, կարգազանցների թիվն ավելի քիչ կլինի, ավելի շատ երեխաներ կորդեգրվեն օրինական ճանապարհով:

Հաշմանդամի քողի ներքո

Ազգային ժողովի սոցիալական, առողջապահության եւ բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովն անցած նիստում օրակարգային քննարկման էր ներկայացրել հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու հարցը:

Ինչպես հայտնեց սոցապնախարարության հաշմանդամների եւ տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ջեմմա Բաղդասարյանը, քննարկումները կշարունակվեն նաեւ առաջիկայում ընդգրկելով հաշմանդամների վերականգնողական գործընթացը կանոնակարգող լրամշակումներ, քաղաքաշինության վերաբերյալ գործող օրենսդրական ակտերում առաջարկություններ, աշխատանքին վերաբերող դրույթների վերանայում: Ըստ տիկին Բաղդասարյանի հանրապետության 110 հազար հաշմանդամները, որոնցից 8050-ը երեխաներ են, 43 տոկոսը կանայք, ինտեգրացման, վերականգնողական ապարատներով ապահովված լինելու եւ այլ խնդիրներ ունեն:

Վարչության պետի հավաստմամբ հնարավոր ամեն ինչ արվում է հաշմանդամներին խնամքով եւ հոգատարությամբ շրջապատելու համար: Ի թիվս այդ ուղղությամբ տարվող աշխատանքների, նախարարությունում գործում է տնային պայմաններում միայնակ տարեցների եւ հաշմանդամների սոցիալական սպասարկման հանրապետական կենտրոն: Վերջինիս կազմում գործում է «Վետերան» օթեւանը, որտեղ սակայն, ինչպես ցույց տվեցին ուսումնասիրությունները, միայնակ տարեցների եւ հաշմանդամների փոխարեն բոլորովին այլ մարդիկ են ապրում: Նախ ասենք, որ օթեւանը նախատեսված է յոթանասունն անց միայնակ, պատերազմի եւ աշխատանքի վետերանների, հաշմանդամների համար: Մինչդեռ 44 բնակարաններից շուրջ 10–ում ապրում են ընտանիքավոր տարեցներ թոռների եւ նույնիսկ ծոռների հետ: Ոմանք գրանցվել են այստեղ անգամ 60 տարին չլրացած տարիքում, շատերն ունեն այլ բնակարան, զավակներ: Ավելին, ինչպես նշեց կենտրոնի տնօրեն Լիլիթ Աղաջանյանը, կացարանի բնակիչներից շատերը, հիմնականում նրանք, ովքեր ապօրինաբար են բնակվում այստեղ, պահանջում են շենքը հանել սոցապնախարարության ենթակայությունից եւ սեփականաշնորհել: Տիկին Աղաջանյանը անթույլատրելի է համարում կացարանի սեփականաշնորհումը, քանի որ, ի տարբերություն որոշ բնակիչների, մեր հանրապետությունում շատերն իսկապես ունեն այդ օթեւանի կարիքը: Ընդհանրապես, նրա կարծիքով, անհրաժեշտ է հատուկ հանձնաժողով կազմել եւ պարզել, թե որքանո՞վ են շենքի բնակիչները համապատասխանում պահանջվող կարգավիճակին, երբ անօթեւան ու հիվանդ շատ տարեցներ տարիներով սպասում են իրենց հերթին:

Օրենքը բարեփոխելն ու լրացնելը, ինչ խոսք, կարեւոր է, սակայն պակաս կարեւոր չէ հետեւելը, թե ինչպես է կիրառվում այն, որպեսզի կեղծ հաշմանդամի ու վաստակաշատ ծերի կարգավիճակ ընդունածները իրենց տեղը զիջեն իսկական տերերին:

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

Օպերան՝ դարձյալ «հացի խնդրի» առջեւ

Արդեն 5 ամիս է, ինչ օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի աշխատակիցներն աշխատավարձ չեն ստացել, եւ ստեղծագործական այս հսկա կոլեկտիվը հերթական անգամ հայտնվել է «հացի խնդրի» առջեւ: Թատրոնում մթոլորտը դարձյալ լարվել է, եւ արդեն գործադուլային տրամադրություններ են արթնանում:

«Իրոք, մարդկանց վիճակը ծանր է, քանզի ոմանք նույնիսկ աշխատանքի գալու համար տրանսպորտի գումար չունեն: Աշխատում ենք հնարավորության սահմաններում որոշ գումար տրամադրել, սակայն 500-1000 դրամի չափով օգնություն ցուցաբերելն էլ այժմ շատ դժվար է, քանի որ ծմռանը չենք աշխատել, ու որեւէ եկամուտ, սեփական գումար չունենք: Իսկ ավելի քան 500 հոգանոց կոլեկտիվին չաշխատելու դեպքում թեկուզեւ 1000 դրամով օգնելը բավական գումար է կազմում»,- ասաց թատրոնի տնօրեն Կամո Հովհաննիսյանը:

Որքան էլ տարօրինակ է, թատրոնը ֆինանսական նման ծանր կացության մեջ է հայտնվել ամենեւին էլ ոչ ֆինանսավորման բացակայության պատճառով: Խնդիրն այն է, որ օպերան, ինչպեսեւ մյուս բոլոր մշակութային հիմնարկները, այս տարվանից փոխել է իր իրավաբանական կարգավիճակը եւ դարձել պետական ոչ առեւտրային կազմակերպություն: Սակայն քանի որ այս գործընթացն առայժմ չի ավարտվել՝ չի հաստատվել նոր կանոնադրությունը եւ թատրոնը դեռ բանկային առանձին հաշիվ չունի, իր համար նախատեսված գումարը որեւէ կերպ ստանալ չի կարողանում: Այսպիսով, մյուս մշակութային օջախների նման, օպերան նույնպես հայտնվել է փակուղային վիճակում: «Մեզ այժմ հատկացված է երկու հունվար եւ փետրվար ամիսների գումարը, սակայն գանձապետարանը թատրոնի հետ այլեւս ֆինանսական գործարքներ վարելու իրավունք չունի, իսկ նոր կարգի համաձայն բանկային հաշիվ դեռ չունենք: Կառավարությունը դեռ նախորդ շաբաթ պետք է քններ գանձապետարանի միջոցով մեր ֆինանսավորումը ժամանակավորապես թույլատրելու հարցը, բայց այն հետաձգվել է: Այս նիստին դարձյալ պետք է խնդիրը բարձրացվի, տեսնենք»,- երեկ ասաց Կ.Հովհաննիսյանը:

Այսուհանդերձ, տնօրենը վստահեցրեց, որ մոտ օրերս խնդիրն այսպես թե այնպես կլուծվի, քանի որ համապատասխան գերատեսչություններից հայտնել են, որ թատրոնի իրավական կարգավիճակի փոփոխության գործընթացն ավարտին մոտ է:

Լ. Գ.

Անհաղթ պատգամավորը

Սարդոսպայն հիշեցնող այս պատմությունը, որ իրականություն է դարձել շնորհիվ ՀՀ ԱԺ պատգամավոր Մելիք Գասպարյանի, թերեւս, իր նախադեպը չունի նույնիսկ հայաստանյան իրականության մեջ:

Արթուր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կապալառուն 1998 թվականից ի վեր լռել է (իսկ ի՞նչ պահանջեր), մայրաքաղաքի կենտրոնում կրիայի քայլերով շինարարություն է ձեռնարկել եւ թողել անավարտ, բայց 2001 թ. սեպտեմբերին հանկարծ որոշել է հայց ներկայացնել դատարան:

Երքաղխորհրդի գործկոմի 02.02.96 թ. որոշմամբ, Ամիրյան փ. 4/20 հասցեի 167 քմ տարածքը 99 տարի ժամկետով վարձակալությամբ հատկացվել է հայ-սիրիական Հ/Ձ «Արմենյոն Թրեյդրզ» ՍՊԸ-ին: Հողատարածքի վարձակալության պայմանագիրը կնքելուց հետո նշված ընկերությունը (նախագահ՝ Արթուր Գյուրջինյան) 19.03.98 թ. պայմանագիր է կնքել «Արարատ» ԼՏԸ-ի (նախագահ՝ Մելիք Գասպարյան) հետ: Ըստ դրա՝ վերջինս մինչեւ հոկտեմբերի 1-ը վերոհիշյալ հասցեում պետք է կառուցեր 5 հարկանի շենք: Ընդգծենք, որ գործկոմի նշված որոշման համաձայն, հատկացվող հողամասի սահմանները պետք է ընդունվեն «ըստ Երքաղգործկոմի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչության կողմից տրվող գլխավոր հակագծի»: Այդպես էլ կատարվել է, այլ խնդիր է, որ որոշակի նպատակահարմարությունից ելնելով, ըստ հողամասի հատակագծի, հատկացվող հողամասի չափերը նշվել-ընդունվել են 198 քմ: Դրան Մ. Գասպարյանը տեղյակ է եղել, իսկ այժմ անտեղյակ է ներկայանում: Տարրական տրամաբանությունը հուշում է, որ պատվիրատուն իրականում տրամադրել է նշված հողամասը, եւ սկսվել են շինաշխատանքները: Այսպիսի հետեւության հիմքը այն փաստն է, որ վերոհիշյալ ՍՊԸ-ն ունեցել է քաղաքապետարանի համապատասխան վարչության տված 31.03.98թ. շինարարության թույլտվությունը: Դա շինարարություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթային փաթեթի վերջին եւ վերջնական փաստաթուղթն է հանդիսանում: Կապալառուն 1998 թվականից ի վեր լռել է (իսկ ի՞նչ պահանջեր), մայրաքաղաքի կենտրոնում կրիայի քայլերով շինարարություն է ձեռնարկել եւ թողել անավարտ, բայց 2001 թ. սեպտեմբերին հանկարծ որոշել է հայց ներկայացնել դատարան: Խնդրել է, որ վերջինս, որպես հայցվորին «Արմենյոն Թրեյդրզ» ՍՊԸ-ի պատճառած նյութական վնասի, ինչպես նաեւ կորցրած եկամուտների հատուցում, այդ ՍՊԸ-ից բռնագանձի 210 000 ԱՄՆ դոլար գումարին համարժեք դրամ:

Իսկ վերեւում ի՞նչ պատճառված վնասի մասին էր խոսքը: Իբրեւ թե պատվիրատուն չի կատարել պայմանագրով նախատեսված իր պարտականությունները, ինչի պատճառով էլ իբր հնարավոր չի եղել կատարել շինարարական աշխատանքներ... Վերը նշված հայցում դա բացատրված է այսպես. «Արմենյոն Թրեյդրզ» ՍՊԸ-ին Ամիրյան փ. 4/20 հասցեում վարձակալության տրված հողատարածքը ծանրաբեռնված է եղել բնակելի տներով, եւ կապալառուն («Արարատ» ԼՏԸ-ն-Ծ.Հ.) ստիպված է եղել իր միջոցներով դրամական փոխհատուցում տալ 4/20 եւ 4/22 հասցեների տներում բնակվող անձանց»: Իրականում կապալառուն իր միջոցներից նման փոխհատուցում չի տվել (համենայնդեպս, ապացուցող փաստեր չի ներկայացրել): Ինչո՞ւ ... նկատենք, որ ինչպես այդ, այնպես էլ լրացուցիչ հայցում բառ անգամ չկա այն մասին, թե դրամական փոխհատուցումը տրվել է այդ տների տերերին՝ նրանց տները քանդելու եւ շինարարական տեղամասի տարածքն ազատելու դիմաց: Ստացվում է, որ դրամական փոխհատուցումը իբրեւ թե տրվել է նրանց համաձայնությունը ստանալու համար:

Հաջորդը եթե տարածքը բնակելի տներով իսկապես ծանրաբեռնված լիներ, ապա Մ. Գասպարյանի ղեկավարած ընկերությունը հիշյալ ՍՊԸ-ի հետ այդպիսի պայմանագիր չէր կնքի: Կամ էլ՝ կհրաժարվեր պայմանագրի կատարումից եւ պատվիրատուից կպահանջեր չտրամադրել ազատ տարածք, եթե այն իրականում ծանրաբեռնված էր... Պարզվում է նաեւ, որ խոսքը բազմաթիվ տների մասին չէ, այլ 4/20 հասցեում գտնված ընդամենը երկու շինության, որոնցից մեկը տուն էլ չի եղել, այլ կիսաքանդ մի շինություն, ընդ որում՝ ապօրինի: Իսկ մյուս շինությունը Ա. Գյուրջինյանի քրոջ տունն է եղել, որը թեեւ Մ. Գասպարյանը նրանից գնել է, բայց այդ կառույցը շինարարության համար հատկացված վիճելի տարածքում չի եղել: Դա հաստատվում է տեսաժապավենով, բազմաթիվ այլ ապացույցներով, որոնք ՀՀ տնտեսական դատարանում քննության առարկա չեն հանդիսացել:

Սակայն վերը շարադրվածը չէ, որ դատարանին հետաքրքրել է, եւ ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, դատարանը վճռել է վերոհիշյալ ՍՊԸ-ի իրավահաջորդից հօգուտ «Արարատ» ԼՏԸ-ի իրավահաջորդ ԼԸ-ի բռնագանձել 459820360 դրամ: Բավարարելով հայցվորի պահանջը եւ պատասխանողի հարգելի բացակայությունը հաշվի չառնելով՝ դատարանը նույն վճռով Ա. Գյուրջինյանից եւ նրա կնոջից հօգուտ «Մելիք Գասպարյան եւ ընկերներ» ԼԸ-ի բռնագանձել է 57000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ինչպես նաեւ 37620 դոլարին համարժեք բանկային տոկոս: «Արմենյոն Թրեյդրզ»-ի իրավահաջորդը ներկայացրել է վճռաբեկ բողոք: Դատական «բեսպրեդելը» կշարունակվի՞...

Վռամ Գալստյանը խառնում է խաղաքարտերը

Հունանյանների քեռու՝ Վռամ Գալստյանի դատաքննական ցուցմունքները հավակնում են դառնալ լուրջ շրջադարձերի պատճառ: Մասնավորապես, ամբաստանյալի պահանջով տուժողի իրավահաջորդներ Արամ Սարգսյանի, Ստեփան Դեմիրճյանի եւ Արմենակ Արմենակյանի կնոջ ներկայությամբ երեկ տեղի է ունեցել դռնփակ դատական նիստ, որի ժամանակ նա հանդես է եկել մի շարք հայտարարություններով: Դրանց բովանդակությունը լրագրողների համար այդպես էլ չմանրամասնվեց: Ավելին, գործով նախագահող Սամվել Ուզունյանը հայտարարեց, որ դռնփակ դատական նիստում Վռամ Գալստյանի ցուցմունքների արձանագրությունը մյուս ամբաստանյալների համար կընթերցվի կրկին դռնփակ դատական նիստում, որը կկայանա ապրիլի 8-ին: Այդուհանդերձ, մեզ հաջողվեց պարզել, որ նշյալ տուժողների իրավահաջորդների ներկայությամբ Վռամ Գալստյանը «Հոկտեմբերի 27»-ի կազմակերպման գործում առավել կարեւորել է Էդիկ Գրիգորյանի մեղսակցությունը նրան վերապահելով համահեղինակի դեր ու կարծիք հայտնել, որ կան նաեւ այլ կազմակերպիչներ: Հարկ է նշել, որ այդօրինակ հայտարարություն Վռամ Գալստյանը հնչեցրել է նաեւ նախաքննության վերջում, կրկին իր պահանջով ներկայացած քննիչների մոտ...

Ավելին, Վռամ Գալստյանը, կարծես թե, փորձում է որոշակի դեր վերապահել նաեւ լրագրող Նաիրի Բաղալյանին: Քանզի, ինչպես պարզվեց մարտի 29-ին Ազգային ժողովում տեղի ունեցած արտագնա դատական նիստում, որի տեսագրությունը երեկ ցուցադրվեց դատարանում, Վռամ Գալստյանը պնդել է, թե Նաիրի Բաղալյանին Նաիրի Հունանյանի հետ քայլելիս տեսել է ԱԺ նիստերի դահլիճին հարակից կարմիր նախասրահում, երբ արդեն ինքը զենքը հանել էր եւ պատրաստվում էր Կ. Հունանյանի օրինակով մուտք գործել ԱԺ նիստերի դահլիճ: Նշենք, որ սա հակասում է Ն. Հունանյանի ցուցմունքներին, քանզի վերջինս պնդել է, որ Ն. Բաղալյանն իր հետ աստիճաններով նախասրահ չի բարձրացել: Ավելին, աստիճանների ներքեւում Նաիրի Բաղալյանի վրա գցելով ձեռքի թղթապանակը ինքը վազելով վերեւ է բարձրացել:

U.S.

Քրեական օրակը բացվում է

Թերեւս զգալով, որ իրավական հարթությունում նախկին բանտապետ Մուշեղ Սաղաթելյանի կատարած հանցանքները հերքել, ըստ էության, հնարավոր չէ՝ «Հանրապետություն» կուսակցության անդամները որոշել են դիմել բացահայտ կեղծարարության եւ քաղաքական շանտաժի: Այլ կերպ դժվար է բնութագրել նախկին վարչապետ Արամ Սարգսյանի անվտանգությունն առ այսօր ապահովող, «Հանրապետություն» կուսակցության անդամ Հուսիկ Բաղդասարյանի՝ Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանում երեկ տված ցուցմունքները:

Հուսիկ Բաղդասարյանը, ըստ գործի նյութերի, ականատես է եղել «Շեյթան» մականունով գործակալ Հարություն Գրիգորյանի «Հանրապետություն» կուսակցության գրասենյակ այցելությանը: Ավելի կոնկրետ նրա ներկայությամբ է գործակալը ցանկություն հայտնել հանդիպել Ալբերտ Բազեյանի հետ «Հոկտեմբերի 27»-ի գործով ենթադրյալ կազմակերպիչների մասին կարեւոր տեղեկություններ հայտնելու պատճառաբանությամբ: Թե այդ ի՞նչ կարեւոր տեղեկությունների մասին է եղել խոսքը Հ. Բաղդասարյանը նախաքննության ընթացքում չէր մանրամասնել տեղեկացնելով, որ գործակալը հրաժարվել էր այդ թեմայով խոսել իր հետ: Իսկ երեկ փորձեց հավաստիացնել, թե գործակալի հետ ոչ միայն խոսել է այդ խորհրդավոր թեմայի մասին, այլեւ վերջինս անգամ դժգոհել է, թե իր հայտնած ոչ բոլոր օպերատիվ տեղեկություններն են «տեղ հասել» կամ օգտագործվել, ու պատրաստակամություն հայտնել իր գիտեցածի մասին բարձրաձայնել նաեւ մամուլի ասուլիսի միջոցով: «Իմ այն հարցին, թե որոշակի կարո՞ղ ես ասել կազմակերպիչների ով լինելու մասին, եթե պատրաստ ես այդ ամենը հայտարարել մամուլի ասուլիսում, նա պատասխանեց, թե դա հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանն է, Սերժ Սարգսյանը եւ Դաշնակցությունը»,- երեկ դատարանում ասաց Հուսիկ Բաղդասարյանը: Բայց, հետագա հարցաքննությունից պարզ դարձավ, որ այդօրինակ զրույցի բովանդակությունն իրականում վկայի երեւակայության արդյունքն է: Քանզի՞ նա ի պատասխան մեղադրող Կորյուն Փիլոյանի հարցերի, պնդեց նախաքննության ընթացքում տված իր այն ցուցմունքը, որ ընդամենը ասվում է. «... Գրասենյակ եկավ մի անձնավորություն ներկայանալով որպես Հարութ եւ ասաց, որ նոր է ազատվել կալանքից ու կարեւոր բան ունի ասելու «Հոկտեմբերի 27»-ի մասին: Ներկայացա, ասացի իմ ով լինելը եւ փորձեցի հետաքրքրվել, թե կարող է ինձ ասել, բայց նա պնդեց, որ կասի միայն Բազեյանին», ինչից հետեւում է, որ վկայի հետ գործակալը չի խոսել «Հոկտեմբերի 27»-ի գործով կազմակերպիչների ինքնության իր ենթադրությունների մասին:

Ցուցմունքների միջեւ եղած այս հակասությունը վկան որեւէ կերպ բացատրել չկարողացավ եւ ընդամենը պնդեց, որ նախաքննական ցուցմունքները արտացոլում են իրականությունը: Ինչն էլ հիմք ընդունելով մեզ իրավունք ենք վերապահում ենթադրելու, որ Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի անունները դատարանում հնչեցնելը քաղաքական շանտաժ էր, «ջերմ-ընկերական» հարաբերությունների մեջ գտնվող Սաղաթելյանին ներկայացված քրեական մեղադրանքներին քաղաքական երանգ հաղորդելու անհաջող փորձ թե իբր Սաղաթելյանը երկրի նախագահին մեղադրելու կեղծ ապացույցներ գտնելու ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկել եւ մեղադրվում է շրջանառվող կասկածները բարձրաձայնելու համար: Համաձայնեք, որ պարզունակ տարբերակ է եւ փաստացի վկայությունն այն բանի, որ Սաղաթելյանի ընկերները հայտնվել են անելանելի վիճակում: Դրա պատճառը թերեւս այն է, որ անգամ Նուբարաշենի թիվ 1 քննչական մեկուսարանի նախկին պետ Ռաֆիկ Հովհաննիսյանը դատարանում պնդեց, որ դեռեւս 2000 թ. փետրվարին Մուշեղ Սաղաթելյանը արտոնյալ պայմաններ էր ստեղծել դատապարտյալ Գարիկ Արզումանյանի համար, չարաշահելով իր լիազորությունները նրան մի քանի օր պահել ՔՊԻՎ պետի տեղակալի աշխատասենյակում, առանց ուղեկցող դասակի, իր ծառայողական ավտոմեքենայով երկու անգամ տարել «2x2» սրճարանի մոտ, ապա նաեւ Վեդի: Ասել է թե դատապարտյալի համար կատարել է վարորդի դեր, ինչի պատճառը, ըստ մեղադրական եզրակացության, եղել է Մ. Սաղաթելյանի մեծ ցանկությունը նրա միջոցով ձեռք բերել գոյություն չունեցող ինչ-որ տեսաերիզ, որտեղ իբր նկարահանված է, թե ինչպես են «Հոկտեմբերի 27»-ի կազմակերպիչները քննարկում հանցագործության կատարմանը վերաբերող հարցեր, որոնց թվում են, իբր, նաեւ Սաղաթելյանին հետաքրքրող անձինք երկրի նախագահն ու պաշտպանության նախարարը:

Ի դեպ, այս անօրինականություններին մասնակցություն է ունեցել նաեւ անհասկանալի պատճառներով վկայի կարգավիճակով հանդես եկող Ռ. Հովհաննիսյանը, քանզի թույլ է տվել դատապարտյալին, առանց համապատասխան գրանցման, դուրս տանել մեկուսարանից:

Սոնա ՏՐՈՒՋՅԱՆ

5-11 ԱՊՐԻԼ, 2002 #11/1662/

Դիմորդների շանսերը մեծանում են

Կառավարությունն արդեն հաստատել է պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների այս տարվա ընդունելության պետպատվերի – վճարովի համակարգի տեղերի թիվը: Ընդհանուր առմամբ, պետպատվերի շրջանակներում անվճար ուսուցման համար նախորդ տարվա 3994-ի փոխարեն այս տարի հատկացվել է 4034 տեղ՝այդ թվում ՊՆ – ՆԳՆ համակարգի ուսումնական հաստատությունների տեղերը, իսկ վճարովի համակարգում ուսուցման համար՝նախորդ տարվա 5736-ի փոխարեն՝5746 տեղ:

ԼԻԼԻԹ ԳԱԼՍՏՅԱՆ

Ինչպես տեղեկացրեց ԿԳՆ բուհերի վարչության պետ Ռուբեն Գասպարյանը, միայն կենտրոնացված համակարգով ընդունելության քննություններում ներգրավված բուհերին տրամադրվել է պետպատվերի 3527 տեղ, նախորդ տարվա համեմատ՝ 20-ով ավելի: Ավելացված տեղերից 15-ը պահուստային են, նախատեսված են զոհված ազատամարտիկների երեխաների եւ 1-ին, 2-րդ կարգի հաշմանդամների ընդունելության համար. ընդհանուր հաշվով պահուստային տեղերը 135-ն են (այդ թվում՝ Մեղրիին հատկացված 6 տեղ): Մյուս 5 տեղը տրամադրվել է ՀՊՃՀ-ին՝ հաշվի առնելով այստեղ ներդրված նոր մասնագիտությունները: Բացի այդ, անվճար ուսուցման հիշյալ 3527 տեղերից 70-ը կտրամադրվի Սփյուռքին, 30-ը՝ Արցախին, 10-ը՝ միջպետական պայմանագրերով ընդունելությանը: Ինչպես միշտ, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիների ընդունելությանը կհատկացվի տվյալ մասնագիտության համար նախատեսված անվճար ուսուցման տեղերի 10%-ը:

Այսպիսով, ՀՊՃՀ-ից զատ, մյուս բուհերին տրամադրված տեղերի թիվը թե՛ պետպատվերի, թե՛ վճարովի համակարգի առումով չի փոխվել: Օրինակ, ինչպես նախորդ, այնպես էլ այս տարի ԵՊՀ-ին տրվել է պետպատվերի 671, վճարովի համակարգի՝ 1141 տեղ: Տեղերի՝ արդեն ներբուհական բաշխման արդյունքում համալսարանում «Միջազգային հարաբերություններ» մասնագիտության գծով ընդունելության համար նախորդ տարվա չափով սահմանվել է անվճար համակարգի՝ 10 եւ վճարովի համակարգի՝ 45 տեղ, իսկ «Իրավագիտություն» մասնագիտության համար նախորդ տարվա պետպատվերի 25 եւ վճարովի՝ 135 տեղի փոխարեն, այս տարի համապատասխանաբար՝ 20 եւ 120 տեղ: Դիմորդների շրջանում մեծ «պահանջարկ վայելող» սույն ֆակուլտետում տեղերի կրճատումը պայմանավորված է նրանով, որ անցյալ տարի այստեղ մտցված «Իրավագիտություն-մանկավարժություն» նոր մասնագիտությունը այս տարի տեղափոխվել է մանկավարժական համալսարան: Ռոմանագերմանական ֆակուլտետում եւս «Անգլերեն լեզու» մասնագիտության համար ընդունելության տեղերի թիվը նախորդ տարվա համեմատ (անվճար՝ 15 եւ վճարովի՝ 75) այս տարի նվազել է, եւ կազմում է համապատասխանաբար 10 եւ 70, «Գերմաներեն լեզու» մասնագիտության տեղերի թիվը նախորդ տարվա 7 եւ 23-ի փոխարեն, այս տարի 5 եւ 15 է, իսկ «Ֆրանսերեն լեզվինը»՝ 7 եւ 23-ի փոխարեն, 5 եւ 15 է:

Տնտեսագիտական ինստիտուտին հատկացված տեղերի թիվը եւս ընդհանուր առմամբ պահպանվել է. պետպատվերի՝ 272, վճարովի համակարգի՝ 514 տեղ: Ըստ մասնագիտությունների տեղերի բաշխման պատկերը նույնպես գրեթե չի փոխվել: Օրինակ, «Տեսական տնտեսագիտություն» մասնագիտության գծով, նախորդ տարվա պես, այս տարի պետպատվերի շրջանակներում կընդունվի 15, վճարովի՝ 35 ուսանող, «Ֆինանսներ եւ վարկ» մասնագիտության գծով՝ համապատասխանաբար 20 եւ 30:

Չի փոխվել նաեւ լեզվաբանական համալսարանին տրամադրված տեղերի ընդհանուր թիվը. անվճար՝ 170, վճարովի՝ 245: Այստեղ էլ ըստ մասնագիտությունների տեղերը բաշխվել են այնպես, ինչպես նախորդ տարի. «Բանասիրություն, օտար լեզու, թարգմանչական գործ» մասնագիտության գծով ընդունելության անվճար եւ վճարովի տեղեր՝ համապատասխանաբար՝ 35 եւ 45, «Անգլերեն լեզու» մասնագիտության գծով՝ 65 եւ 110, «Գերմաներեն լեզու» մասնագիտության գծով՝ 30 եւ 40, «Ֆրանսերեն լեզու» մասնագիտության գծով՝ 40 եւ 50:

Իսկ բժշկական համալսարանում պետպատվերի ընդունելության տեղերն ավելացել են ի հաշիվ «Բուժական գործ զինված ուժերում» մասնագիտությանն այս տարի հավելյալ տրամադրված 10 տեղի: Մյուս մասնագիտությունների առումով այստեղ եւս հատկացված է նույնքան տեղ, որքան նախորդ տարի էր: Օրինակ, «Բուժական գործ, մանկաբուժություն եւ բժշկականխարգելման գործ» մասնագիտությանը տրամադրվել է պետպատվերի 98, վճարովի համակարգի՝ 125 տեղ, «Ստոմատոլոգիա» մասնագիտությանը՝ համապատասխանաբար 10 եւ 40, «Դեղագործություն» մասնագիտությանը՝ 10 եւ 35 տեղ: Ընդհանուր առմամբ, ԵԲՀ-ին հատկացված է պետպատվերի 148, վճարովի համարարգի՝ 200 տեղ:

Հայտնի է, որ մի շարք բուհերում, օրինակ՝ ճարտարագիտական, ճարտարապետաշինարարական, մանկավարժական համալսարաններում, ինչպես եւ գյուղակադեմիայում, որոշ մասնագիտությունների գծով կենտրոնացված համակարգից զատ, ընդունելություն է կատարվում նաեւ հարցազրույցով: Ուստի առաջիկայում միջնակարգ կրթության վարչության կողմից կատարված ստուգումների եւ օլիմպիադաների արդյունքների ամբողջացումից հետո կճշտվի բարձր առաջադիմություն դրսեւորած ֆիզիկամաթեմատիկական թեքումով դպրոցների եւ բուհերի հենակետային վարժարանների ցանկը, որոնց շրջանավարտներին կթույլատրվի ֆիզիկամաթեմատիկական եւ քիմիակենսաբանական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունվել բուհ: Ըստ այդմ, կհստակեցվեն նաեւ հարցազրույցով ընդունելության համար նախատեսված տեղերը, որոնք չպետք է գերազանցեն տվյալ բուհի պետպատվերով նախատեսված տեղերի 30%-ը եւ համապատասխան մասնագիտության տեղերի՝ մինչեւ 50%-ը:

Անշուշտ, այս տարի նույնպես նախատեսվում է վճարովի համակարգում հավելյալ ընդունելություն կազմակերպել, որի շրջանակներում ներգրավվածները զորակոչի դեպքում չեն օգտվելու տարկետման իրավունքից: Սակայն առայժմ հավելյալ վճարովի տեղերի թիվը ԿԳՆ-ն չի որոշել: Հիշեցնենք, որ նախորդ տարի այս կարգով բուհ ընդունվեց 926 ուսանող, եւ, ինչպես նշեց Ռ. Գասպարյանը, նախարարությունն այս տարի պատրաստվում է հավելյալ վճարովի տեղերը մոտ 200-300-ով ավելացնել:



ԴԻՄՈՐԴ 2002

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ 2002 Թ. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՐՑԱՏՈՄՄԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ

«ՖԻԶԻԿԱ-Ի» տարբերակ

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՏՈՄՍ N

1. (5 միավոր)

Մոլեկուլային-կինետիկ տեսության հիմնական խնդիրը: Մոլեկուլային-կինետիկ տեսության հիմնադրույթները – դրանց փորձնական ապացույցները (թվարկել մի քանիսը): Ատոմների – մոլեկուլների չափերի, թվի – զանգվածների գնահատումը: Հարաբերական մոլեկուլային զանգված: Ավոգադրոյի թիվ (հաստատուն): Նյութի քանակ, նրա միավորը: Մոլային զանգված, նրա միավորը: Մոլային զանգվածի – հարաբերական մոլեկուլային զանգվածի կապը: Նյութի քանակը արտահայտված նյութի զանգվածի – մոլային զանգվածի միջոցով: Մոլային ծավալ:

2. (4 միավոր)

2a. Ի՞նչ բանաձ–ով է որոշվում ν հաճախությամբ լույսի ֆոտոնի էներգիան (0.5):

2b. Ի՞նչն են անվանում ֆոտոէֆեկտի «կարմիր սահման» (0.5):

2c. Ի՞նչն են անվանում ելքի աշխատանք (0.5):

2d. Գրել ֆոտոէֆեկտի «կարմիր սահմանի» – ելքի աշխատանքի կապն արտահայտող բանաձ–ը (0.5):

2e. Ինչո՞ւ ֆոտոէֆեկտ դիտվում է միայն ընկնող լույսի որոշակի հաճախություններից մեծ հաճախությունների դեպքում (1.0):

2f. Ի՞նչ բանաձ–ով կարելի է որոշել ֆոտոնի էներգիան, եթե հայտնի է լույսի ալիքի λ երկարությունը վակուումում (1.0):

3. (2 միավոր)

Ճառագայթը օդից անցնում է թափանցիկ դիէլեկտրիկի մեջ: Անկման անկյունը հավասար է 45°-ի: Ինչի՞ է հավասար բեկման անկյունը: Դիէլեկտրիկի բեկման ցուցիչը հավասար է 2-ի:

4. (2 միավոր)

Հեղուկի հիդրոստատիկ ճնշումը 2 մ խորության վրա հավասար է $2,5 \cdot 10^4$ Պ-ի: Որոշել ճնշումը 0,08 մ խորության վրա:

5. (3 միավոր)

Հոսանքի ուժը կոճում փոքրացավ 12 Ա-ից մինչ– 8 Ա, որի հետ–անքով կոճի մագնիսական դաշտի էներգիան փոքրացավ 2 Ջ-ով: Որոշել կոճի ինդուկտիվությունը:

6. (4 միավոր)

h բարձրություն ունեցող աշտարակից միաժամանակ նետում են երկու մարմին առաջինն ուղղաձիգ դեպի վեր v_1 սկզբնական արագությամբ, իսկ երկրորդը ուղղաձիգ դեպի վար՝ v_2 սկզբնական արագությամբ: Գտնել այն Δt ժամանակամիջոցը, որը բաժանում է դրանց գետնին ընկնելու պահերը:

«ՖԻԶԻԿԱ-II» տարբերակ

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՏՈՄՍ N

1. (5 միավոր)

Ուժի իմպուլս, նրա միավորը: Մարմնի իմպուլս, նրա միավորը: Կապը ուժի իմպուլսի – մարմնի իմպուլսի փոփոխության միջ–, երբ մարմնի վրա ազդող ուժը՝ ա) հաստատուն է, բ) փոփոխական է: Նյուտոնի II օրենքը մարմինների համակարգի համար: Ներքին – արտաքին ուժեր: Փակ համակարգ: Իմպուլսի պահպանման օրենքը: Համակարգի իմպուլսի փոփոխությունը, երբ համակարգում արագ ընթացող պրոցես է տեղի ունենում: Ռեակտիվ շարժում: Օրինակ:

2. (4 միավոր)

2a. Ինչպե՞ս է փոխվում իդեալական գազի ներքին էներգիան իզոթերմ սեղմման պրոցեսում (0.5):

2b. Ո՞ր մեծությունն է կոչվում ջերմաքանակ (0.5):

2c. Ի՞նչ կապ կա գազի վրա արտաքին ուժերի կատարած աշխատանքի – գազի կատարած աշխատանքի միջ– (0.5):

2d. Տալ ներքին էներգիայի սահմանումը (0.5):

2e. Ինչո՞ւ է ադիաբատ ընդարձակման պրոցեսում իդեալական գազը սառչում (1.0):

2f. Ինչպիսի՞ իզոպրոցեսի դեպքում է համակարգին հաղորդված ջերմաքանակը հավասար համակարգի ներքին էներգիայի փոփոխությանը: Պատասխանը հիմնավորել (1.0):

3. (2 միավոր)

Ինչպիսի՞ն պետք է լինի հոսանքի ուժը $ZnSO_4$ -ի լուծույթում, որպեսզի 18000 վ-ի ընթացքում կատոդի վրա անջատվի $306 \cdot 10^{-4}$ կգ ցինկ:

4 (2 միավոր)

Ջրաբաշխական մամլիչի փոքր մխոցի մակերեսը $5 \cdot 10^{-4}$ մ^2 է: Այդ մխոցի վրա կիրառված է 200 Ն ուժ: Որոշել մեծ մխոցի վրա ճնշման ուժը, եթե նրա մակերեսը $5 \cdot 10^{-2}$ մ^2 է: Շփումն անտեսել:

5. (2 միավոր)

Առաջին ֆոտոնի էներգիան $3,3 \cdot 10^{-20}$ Ջ-ով մեծ է երկրորդ ֆոտոնի էներգիայից: Գտնել առաջին ֆոտոնի հաճախությունը, եթե երկրորդ ֆոտոնի հաճախությունը հավասար է $3,2 \cdot 10^{14}$ Հց-ի:

6. (2 միավոր)

Տրանսֆորմատորը միացված է 110 Վ լարում ունեցող ցանցին: Առաջնային փաթույթի գալարների թիվը հավասար է 165-ի: Քանի՞ գալար պետք է ունենա երկրորդային փաթույթը, որպեսզի նրա ծայրերում լարումը լինի 8 Վ:

7. (3 միավոր)

Հորիզոնական հարթ մակեր–ույթին գտնվող 2 կգ զանգվածով մարմինը շարժվում է 0,2 մ/վ^2 արագացմամբ, երբ արագացում հաղորդելիս դրան կապված զսպանակի երկարությունը 20,2 սմ է: Եթե արագացում հաղորդելիս այդ նույն զսպանակի երկարությունը դառնում է 20,4 սմ, ապա մարմնի արագացումը հավասարվում է 0,4 մ/վ^2: Գտնել զսպանակի սկզբնական երկարությունը – դրա կոշտությունը:

Ընդեմ դեկորատիվ կիրառական սիրո

Վերնիսաժը գաղափարախոսություն է: Հոգևոր-մշակութային արժեքների նկատմամբ մեր մեջ դաստիարակված ակնածանքը՝ դրանց դրսևորումներից յուրաքանչյուրի եզակիության, անկրկնելիության համոզմունքով, վերնիսաժը քարոզանդ արեց՝ ստեղծելով հոգևոր խաբկանքով միտիթարվող մշտական գնորդ շուկայում, ուր ամեն ինչ է վաճառվում, մատչելի է եւ դյուրամարս:

Ալվարդ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գեղարվեստականության հավակնությամբ ու կաղապարով մասսայական արտադրանքի շուկայական ոլորտ են ներքաշվել կերպարվեստը, գրականությունը, ազգագրությունը, պատմությունը, երաժշտությունը եւ Ժողովուրդը: Ժողովուրդը թրատվում է երկսայր սրով: Մի շեղբը նրա կրթա-մշակութային կեցության համարյա թե դասականացված համակարգն է ոչնչացնում սոցիալական աղետի խուճապային անելանելիությունից օգտվելով, մյուսը ոչնչացնում է նրա հազարամյակներում բյուրեղացած ազգային բնույթը ստեղծողի - նոր միայն սպառողի, ճարտարապետի - ոչ թե օրավարձով, մի փոր հացով բավարարվող սեւագործ բանվորի, սովորողի - նոր միայն սովորեցնողի, քաղաքակրթություն ստեղծող ու տարածող աշխարհատեր վաճառականի, ոչ թե պարզունակ չարչու: Ազնվականի ազգային բնույթն ու դիմագիծը, որն ինչքան էլ կոտորակվել, աղճատվել է պատմության կեռմաններում, անկախ ֆորմացիաներից, արեւելա-արեւմտյան գերտերությունների (միշտ էլ եղել են) կոպիտ ներկայությունից նրա գլխավերեւում, պահպանել ու մեզ է հասցրել այս հայ ժողովուրդը, մերը, միակը:

Վերնիսաժը իր արտադրանքխորհրդանշաններով (խորվիրապային մասիսներից մինչեւ օբսիդիանային հայոց այբուբենը) հետեւանք է առ Հայրենիք սիրո շուկայական դրսեւորման, որ 88-ի Արցախ-երկրաշարժային տարում պարզապես հազարերանգ հրավառության պես կարոտով ու ցավով իր հոգուց ժայթքեց հայ սփյուռքը իր զգացական, նյութական ահռելի զեղման փոխարեն միամտորեն փորձելով Հայրենիքից մասունքի պես մի բան տանել խաչքար է, Մասիս է, հավատ է, լույս է: Ի՞նչ իմանար, մենք ի՞նչ իմանայինք, որ շուկան մեր տուն ու սիրտն է մտել արդեն: Վերնիսաժը հետեւանքի

ծնունդ է: Ինչ-որ հետնախորշերում այս ծնունդը համբերատարորեն հղացել էին տիբեթյան մոգերը մինչեւ 88 թիվը: Իմ սերունդը հիշում է. խրուշչովյան հալոցքի ժամանակ ստեղծվեց այդ հղացման զգացական կենսոլորտը: Կռապաշտության խորհրդանշանները կործանվում էին ոչ միայն գործնականորեն, ինչպես մեր օրերում Ստալինի, Լենինի եւ այլ արձաններ, այլեւ հոգեբանության մեջ: Մարդիկ, լեթարգյան քնից արթնացած, ներսույզ հայացքով իրենց արմատին պատմությանը, ազգային արժեքներին էին վերադառնում, եւ նոր խորհրդանշանների ծնունդ սկսվեց: Հատկապես մերժվածներն ու արգելվածները, հատկապես մոռացվածները դարձան խորհրդանշան: Սա ազատության եւ ազգային ինքնագիտակցության յուրօրինակ, մի քիչ ֆոլկլորային դրսեւորում էր: Այն ժամանակ էլ ասպարեզում պստլիկ ծեռներեցներ հայտնվեցին խորհրդանշաններ արտադրելը միայն հոգեւոր սնունդ չէր, թեեւ ամեն ինչ դեռ չափավոր էր, արժեզրկված չէր: Արժեզրկելու եւ մյուս ծրագրերը հետո էին հղանալու: Հետո: Դանդաղ, բայց հաստատուն քանդելու էին եւ քանդեցին նախ հիմնասյունը՝ Դպրոցը-Մայրենին-Գրականությունը-Պատմությունը: Ասպարեզը ծեռներեց ստահակներն ու խնկարկուներն էին զրավում: Ոսկեմշակները հոգեւոր լույսի համեստ պահապանները, ոտնատակ տրվեցին: Պալատականի պատվերով, նշանակովի, հատուկ կաղապարով թրծված «տաղանդներ», «հոգեւոր գեներալներ» գրավեցին ասպարեզը նրանց փոխարեն: Սրանք գործում էին մաֆիական աստիճանակարգով դասդասված, հովանավորվում էին իրենց կերպին հարմար «տեսաբաններով», աստղ դառնալու գռեհիկ գզվռտոցներով տատանում էին ճահիճը: Կենտկոմը մոսկովյան խորհրդավոր ռեկլամներով, իբրեւ թե այլախոհական համարձակության անհասկանալի հմայքով էր պսակում սրանց, եւ նոր պատմություն էին ստեղծում: Սրանք այսօրվա նոր հայերի նախակարապետներն են: Հրատարակչություն, թատրոն, համերգասրահ, ակադեմիա, դպրոց, գեղ, քաղաք, ԲԱՄ, պետմրցանակներ, շքանշաններ, կոչումներ, արտասահմաններ, մամուլ, պետության սեփական հովանավոր ղեկավարներ, սեփական դատավորներ, սեփական ռայկոմի քարտուղարներ, սեփական ծննդավայրեր, հետագայում տունթանգարան դառնալու համար կառուցվող դղյակներ, որոնց ստվերի տակ գրեթե աննշմար ծվարել, մնացել էին գոմանման հայրական օջախները: Երիցս մոռացված:

Ժողովուրդը դարձավ Մասիս սարի նկար (ոչ լեառն Արարատ), խնոցի (առանց ծփանքի), կարպետ (առանց արեւաշողի), կավե կճուճ (անարձագանք): Նրա հոգին-ոգին, նատյուրմորտային խորհրդանշանների վերածվելով, դարձավ քաղցրավուն բաժակաճառերի ներշնչանքի աղբյուր կամ հեռուստահաղորդման ծեւավորում:

Վերնիսաժի հղացումի ընդմիջումներին մի բան դեռ տրոփում էր, ինչ-որ մաքուր, կենդանի, դալար արյունատար անոթ, որին հղացողները չէին նկատել, չէին դիպել: Անմարմին երազի պես Հայրենիքի Տեսլականը: Սա այս երկու բառերի կապակցությունը, ոչ մի առնչություն չունի հաշվարկների, քաղաքական նպատակահարմարության, պատմական պահի ընտրության հետ: Սա անքակտելի, մշտնջենական բան է: Անկորնչելի է: Զանազան հղացումների ընդմիջումներին եւս այդ Անկորնչելին, որպես կսկիծ ու դյութանք (մշուշի միջից տեսիլ դյութական), թերեւս միակ բանն է, որ տրոփում է չենթարկվելով, չխառնվելով ոչ մի այլ ռիթմի ու չափումի, ոչ մի այլ ջրի: Այդ հետո իշխաններ-ը աթոռատերերն են տրոփյունի ժամանակագրությունը հարմարեցնում իրենց սնափառությանը, իրենց պատմությանը, որը, նրանց կարծիքով, սկսվում ու ավարտվում է հենց իրենցով: Մնացյալը իբրեւ թե լռություն է:

Վերնիսաժը ստեղծվում է մանր բուրժուազիայի նմանողությամբ ու ճաշակով, թեեւ ստեղծողները նրանք չեն, տիբեթյան մոգերն են: Ինչ անուն էլ տաս նրանց ստեղծողներին, նախնական կապիտալի կուտակողներ, առեւտրական (կամ կոմպրոդորական, կամ մի այլ հայ գրողի Պերճ Պռոշյանի բնորոշմամբ առեւտրա-վաշխառուական բուրժուազիա), մերը մեծամասնությունը մանր բուրժուազիան է, որը ավելի քիչ է գող կամ գրեթե գող չէ փերեզակությամբ, չարքաշությամբ, ինչ-որ բան է կուտակում դիմանալու երեւութական պատկեր ստեղծելով երկրում: Խոշորները (մեր չափանիշներով) գողերն են, բայց նրանք կոմպրոդորական են կոչվում թե առեւտրա-վաշխառուական մեկ է, շատ վտանգավոր են, որովհետեւ Հայրենիք չունեն (ընկեր Լենինի հետ համաձայն եմ, առաջինը նրանք են փախել ու փախչելու են): Ո՞վ է մնում տակը, ո՞վ... Տակը խորհրդանիշ դարձած ժողովուրդն է, որին էլ խորհրդանշական սիրով, որպես ապրանք, վաճառում են վերնիսաժում:

Այնուամենայնիվ, ովքե՞ր ստեղծեցին վերնիսաժը եւ ի՞նչ նպատակով, ովքե՞ր են կանգնած նրա ղեկի մոտ: Այս երկրորդ մի քիչ լավատեսական վարկածով, ըստ իս, ստեղծողը, վաճառողը սոցիալական աղետից կիսամեռ ժողովուրդն է: Ի պատասխան շուկայի, թե իբր ամեն ինչ գնվում ու վաճառվում է, նա փորձեց խաբել «ծեռներեց իմաստուններին անճաշակ, անուս դարձվորիկներին»: Իր Գանձերը խեցու պես մեջը ամփոփած, նրանց ամենակուլ ախորժակը մարելու համար ասպարեզ նետեց զիգիպիգի «հազարումիմանրուքը», ինչպես ութոտնիկն է թանաքագույնը նետում պաշտպանվելու համար, կամ էլ ինչպես Ակրոպոլիսի շուրջն են ամեն Աստծո օր մի քանի տոննա մարմարի խիճ սփռում, որպեսզի զբոսաշրջիկները,- իսկ սրանք մարդկային հատուկ տեսակ են,- երբ փորձեն ինքնագոհ ագրեսիվությամբ իրենց տեսած հրաշքից մի փշուր տանել, այդ խիճերից վերցնեն, չքանդեն Տաճարը:

Զբոսաշրջիկներն են տաճարը քանդում, զբոսաշրջիկ ազգերը, քաղաքագետները, պատմաբանները, ծեռներեցները:

Տաճար ստեղծած ժողովրդի գերզգայուն հոգեմարմինը ինքնասույզ, ինքնամփոփ, նրանցից թաքցնում է իր միակ տրոփող, կենդանի արյունատար անոթը զիգիպիգի խիճով շեղելով նրանց ուշադրությունը, ագահությունը: Որքան լավ ու խորն է թաքցնում այդ անոթը, այնքան համբերատար է ու դիմացկուն: Հարցական նշան է դրված վերը շարադրված յուրաքանչյուր բառի վրա: Շարադրվածը ընդամենը վարկած է, հարց: Իսկ հարցեր տալիս են երբ տագնապ կա: Նույնիսկ ամենաանմեղ հարցը տրվում է իմանալու ու հասկանալու համար: Անգիտությունից, անորոշությունից են ծնվում տագնապները... նաեւ Առաջընթացը:

Առաջընթացը, զարգացումը, էվոլյուցիան յուրօրինակ մուտացիա է: Եթե բնախույզները ճիշտ են, եւ մարդը կապիկից է առաջացել, միեւնույն է, այս պարագայում էլ տեսակի մուտացիան մի զզվելի բան ունի թաքցրած իր էության մեջ, որովհետեւ կապիկը իր տեսակի մեջ կատարյալ է, մարդը դեռ ոչ: Գոյապայքարի, տեսակի պահպանման համար կոմպրոմիսի գնալով մենք ինչ մուտացիաների ենթարկվեցինք, Աստված իմ, եւ դեռ ինչքան պիտի ենթարկվենք: Մենք: Ո՞ւր ենք հասել:

Վերնիսաժն է ասպարեզը, ու մենք ստեղծողներս: Մենք: Ովքեր են ներգրավված այս ընդգրկուն դերանվան մեջ: Հայաստանի Հանրապետության սոցիալական, քաղաքական, հասարակական կյանքի այսօր, ավաղ, արդեն վտանգավոր բեւեռացումները, որի ապոթեոզը ազդարարվեց 96-ի սեպտեմբերյան տխուր կրակոցների միջոցով, արդյոք վերջնականապես փշրե՞լ են այդ դերանվան իմաստը, էությունը: Համազգային ինքնագիտակցության ողնաշարը վտանգավոր չափերով ծռվել է այս բեւեռացումից: Ժողովրդին համախմբող Հայրենիքի հոգեւոր մերանը, որ ծնում է «Մենք»-ի գաղափարը, ազգ է դարձնում նրան (Հայաստանում, Արցախում, Ջավախքում, Սփյուռքում), հիվանդացա՞վ, վերնիսաժում համարակալվեց որպես խորհրդանշան-ի՞ր, որպես անհատի կամ խմբերի գաղափարախոսությո՞ւն...

Վերջաբանի փոխարեն զգացմունքային անդրադարձ: Վերը շարադրվածից վախեցած փորձեմ այդ բեւեռացումներից վեր ինչ-որ մի այլ բան ասել, ասենք հպարտորեն ասել. «Հարազատներս, 88-ին «միացում» ու դրանից շատ ավելի առաջ էլ «հողերը» կանչողներ, ոգեշնչողներ, Հայաստանից Արցախ գնացող ճանապարհը կառուցվում է: Ասել, որ դա սոսկ ճանապարհ չէ՝ հայոց երկու հողակտորները իրար կապելու, որ դա նաեւ հայաստանաբնակ, սփյուռքաբնակ հայության իրար միացնող երազի զարկերակն է Մենքը:

Հպարտությամբ գրել, անվերապահորեն, որ իմ կրտսեր գրչեղբայրը Վազգեն Սարգսյանը, Հայաստանի երրորդ Հանրապետության առաջին ազգային բանակի ստեղծողն է, որ դա պատմական իրողությունն է, որ կարող է արհեստավարժ զինվորականները, գեներալները տրամաբանությամբ ու ճշգրիտ հաշվարկներով չհամարձակվեին փլուզված երկրում այդպիսի սխրանք գործել, իսկ նա գրողը, անփորձը, շլիմանյան հավատով գտավ իր Տրոյան, համարձակվեց: Այս համարձակության հղացումը Արաբոյից սկսվել Շուշիով շարունակվում է: Այսօր այդ բանակը կա, ահռելի թերություններով, սխալներով, բայց կա, իրողություն է, եւ որ իմ գրչեղբայրը չի մոռացել այդ արարման ոգեշնչողներից որեւէ մեկին, չի կարող մոռանալ Շահենին, Դուշմանին, Բեկորին, Հրանտին, մյուսներին:

Որ ամեն ինչ դեռ առջեւում է, եւ այս փոքրիկ երկիրը մեր ոգու անեզր Հայրենիքն է մեկ հատիկ աչքի լույս, որը կորցնելու դեպքում այլեւս մնացյալը կարեւոր չէ:

Դարձյալ ու դարձյալ ի շրջանս յուր:

Գոյապայքարի, տեսակի պահպանման համար կոմպրոմիսի գնալով՝ մենք ինչ մուտացիաների ենթարկվեցինք, Աստված իմ, եւ դեռ ինչքան պիտի ենթարկվենք: Մենք: Ո՞ւր ենք հասել: Վերնիսաժն է ասպարեզը, ու մենք՝ ստեղծողներս:

Հ. Գ. – Փոքրիկ կրճատմամբ հրապարակման ներկայացնելով հինգ տարվա վաղեմություն ունեցող այս հոդվածը, որ տպագրվել է «Գարուն» ամսագրի 1997թ. 3-րդ համարում, ես նպատակ ունեմ ընթերցողի ուշադրությունը կրկին բեւեռել, կարծում եմ, մեզ համար շատ կարեւոր հարցերի վրա, որոնք, ավաղ, իրենց արժանի ուշադրության չեն արժանանում:

Ապակենտրոնացումը հզորացնում է երկիրը

Ներկայումս Հայաստանը ընթանում է լոկ պետական իշխանության հզորացման ճանապարհով՝ այդ գործընթացում անտեսելով եւ երկրորդական դեր հատկացնելով տեղական ինքնակառավարման (ՏԻ) համակարգին: Այսինքն՝ իրականացվում է «հզոր պետություն-թույլ համայնքներ» քաղաքականությունը, որի արդյունքում պետության հզորացումից հետո միայն ուշադրություն կդարձվի տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման խնդիրներին:

Վարուժան ՆԵՐՍԻՍՅԱՆ
Իջեւանի քաղաքապետ

Այսօր իսկ հնարավոր է սկսել ապակենտրոնացման գործընթացը՝ լիազորությունների մի մասը տեղափոխելով խոշոր համայնքներ (ասենք՝ 15 հազ. եւ ավելի բնակիչ ունեցող քաղաքներ), իսկ հետագա ապակենտրոնացումը իրականացնելու համար Հայաստանում պետք է իրականացվի ռեգիոնալ ինքնակառավարում: Հարցն այն է, որ ներկայիս մարզերը բաղկացած են նախկին խորհրդային մի քանի տարածաշրջանների (37 շրջան) հանրագումարից:

Սակայն իրականությունը ցույց է տալիս, որ երկրի զարգացման այս ճանապարհն արդյունավետ չէ, քանի որ աղքատ համայնքներով, սոցիալապես անապահով ազգաբնակչությամբ, քանդված ու ավերված ճանապարհներով, կազմալուծված արդյունաբերությամբ եւ բազմաթիվ չլուծված հիմնախնդիրներով հնարավոր չէ կառուցել, առավել եւս լինել հզոր պետություն:

Ժամանակն է արդեն հիմնական շեշտը դնել տեղական ինքնակառավարման մարմինների վրա, հնարավորություն տալ նրանց հզորանալու, եւ ամուր հիմքի վրա ունենալ հարուստ ու բարգավաճ պետություն: Հանրապետության 932 համայնքներ այսօր այն հիմնական կառույցներն են, որտեղից էլ պետք է սկսվի երկրի զարգացման եւ կայացման գործընթացը:

Կառավարման հանրապետական մարմինների, մարզապետարանների եւ ՏԻ մարմինների միջեւ ներկայումս գործող կենտրոնացման ու ապակենտրոնացման հարաբերականությունը սահմանվել է ՀՀ-ում ՏԻ համակարգի ստեղծման ժամանակ եւ կարիք է զգում կատարելագործման: Արդյունավետ հարաբերակցություն ստեղծելու համար պետք է ելնել կենտրոնացման ու ապակենտրոնացման դասական գաղափարախոսության հիմնադրույթներից, մեր հանրապետության ՏԻ իրողությունից եւ առանձնահատկություններից:

Փորձը ցույց է տալիս, որ ավելի մեծ արդյունավետության կարելի է հասնել միայն կենտրոնից վերահսկողության կրճատման գնով: Այս դեպքում հարց է առաջանում՝ ինչպիսին պետք է լինի ապակենտրոնացման աստիճանը: Այն բարձր է այնքանով, որքանով մեծ է կառավարման ստորին մակարդակում ընդունված որոշումների քանակը, մեծ թվով գործառույթներ են առնչվում ստորին մակարդակում ընդունված որոշումների հետ, քիչ համաձայնեցում է պահանջում ընդունվող որոշումը:

Վերը նշվածից հետեւում է այնպիսի սկզբունքի գոյությունը (խոսքը սուբսիդիարության սկզբունքի մասին է), որը կթույլատրի ապահովել ճկուն կոորդինացում՝ մի կողմից բազմաթիվ տեղական մարմինների միջեւ, եւ մյուս կողմից՝ տեղական իշխանության ու կենտրոնական կառավարության միջեւ:

Սուբսիդիարության հիմնարար սկզբունքն այն է, որ լիազորությունները պետք է իրականացվեն այն մակարդակով, որն ավելի մոտ է քաղաքացիներին:

Սուբսիդիարության սկզբունքի կիրառումից ընդհանրապես եւ ՀՀ-ում մասնավորապես կարելի է սպասել հետեւյալ հետեւանքները.

1. կենտրոնական եւ տեղական իշխանության մակարդակների միջեւ հիերարխիայի իջեցում, որտեղ համագործակցությունը կկառուցվի ավելի հավասարության հիման վրա,

2. կառավարման տարբեր մակարդակների միջեւ գոյություն ունեցող կապերը, որ կրում են միակողմանի բնույթ (կենտրոնից՝ տեղական իշխանություններին), երկկողմանի կդառնան այն բանից հետո, երբ տեղական իշխանությունները որոշումներ ընդունելիս համաձայնեցնելու խնդրանքով կսկսեն դիմել կենտրոնական կառավարությանը, եւ այս առումով ՏԻ մարմինները պետք է կարողանան արտահայտել իրենց կարծիքն ու պահանջել իրենց շահերին համապատասխան որոշումներ:

Կառավարման հանրապետական մարմինների, մարզպետարանների եւ ՏԻ մարմինների միջեւ ներկայումս գործող կենտրոնացման ու ապակենտրոնացման հարաբերակցությունը սահմանվել է ՀՀ-ում ՏԻ համակարգի ստեղծման ժամանակ եւ կարիք է զգում կատարելագործման: Հասունացել է գործառույթների իրականացման կենտրոնացման ու ապակենտրոնացման միջեւ նոր, առավել արդյունավետ հարաբերակցության ստեղծման խնդիրը: Այդ պատճառով նպատակահարմար է՝

1. Ընդլայնել ՏԻ մարմինների պարտադիր եւ պատվիրակված լիազորությունների շրջանակները: Դրանք պետք է տեղի ունենան հանրապետական կառավարման մարմինների եւ ավելի շատ մարզպետարանների կողմից ներկայումս իրականացվող գործառույթների մի զգալի մասը ՏԻ մարմիններին փոխանցելու ճանապարհով: Խոսքը վերաբերում է հատկապես հասարակական կարգի պահպանությանը, մունիցիպալ եւ ռեգիոնալ ենթակայության ոստիկանական համակարգի ստեղծմանը, ինչը կենտրոնական իշխանությանը կծերբազատի մանր կենցաղային, առօրյա, հասարակական նվազ վտանգավորություն ունեցող դեպքերի վրա կենտրոնանալուց եւ աշխատանքը կուղղի հասարակության համար վտանգավոր հանցագործությունների բացահայտմանն ու կանխմանը:

Անհրաժեշտություն է նաեւ բնապահպանական խնդիրների լուծման համար վերահսկողական լիազորությունների տրամադրումը համայքներին՝ ընդլայնելով համայնքների իրավունքները բոլոր բնապահպանական ոլորտներում (անտառ, ընդերք եւ այլն):

Քաղաքաշինության գործունեության բնագավառում վերահսկողական եւ վավերչական պատասխանատվության ենթարկելու լիազորություններ համայնքները գրեթե չունեն: Ապակենտրոնացման գործընթացը ՀՀ-ում ավարտելու համար անհրաժեշտ է, որ այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը, սոցիալական ապահովությունը, փոխանցվեն համայքներին: Կրթության ոլորտում փորձնական կարգով 57 դպրոց տրվել են համայնքների ղեկավարմանը, եւ այդ գործընթացը կասեցվել է: Դա պետք է շարունակել:

Ջրմուղ-կոյուղու ձեռնարկությունները համայնքներին չեն պատկանում: Անհրաժեշտ է համակարգում կատարել կառուցվածքային փոփոխություններ այնպես, որ ջրաղբյուրից մինչեւ սպառող ամբողջ համակարգը լինի համայնքի կամ միջհամայնքային սեփականություն, ինչը թույլ կտա ավելի օպերատիվ եւ լիարժեքորեն լուծել ներհամայնքային ջրամատակարարման եւ կոյուղացման հիմնախնդիրները:

2. Սոցիալական ոլորտում համայնքների լիազորությունների ընդլայնումը պետք է կատարվի բնակչության կարիքավորության աստիճանի որոշման, սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման, զբաղվածության ապահովման եւ այլ ոլորտներում: Անաշխատունակ, գործազուրկ բնակչության, կենսաթոշակառուների, հաշմանդամների սոցիալական որոշակի կենսամինիմումի ապահովման գործին աջակցելը համայնքների առաջնահերթ գործունեության ուղղվածությունն է: Այժմ որեւէ իրավասություն վերը նշված բնագավառի նկատմամբ համայնքապետերը չունեն:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների աճը տնտեսական եւ ֆինանսական ոլորտում պետք է կատարվի համայնքի սեփականության բազայի ընդլայնման հիման վրա: Դա կարող է կատարվել կրթության, առողջապահության, սոցիալական ծառայությունների շատ օբյեկտներ ՏԻ ենթակայությանը հանձնելու միջոցով:

Անհրաժեշտություն է առաջացել ավելացնել նաեւ համայնքների սեփական եկամուտների բաժինը, որը ներկայումս միջին հաշվով, ինչպես նշեցինք, չի գերազանցում 30%-ը: Տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների հավաքագրման ցածր մակարդակը (մինչեւ 50%), մեր կարծիքով պայմանավորված է ինչպես հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակով, այնպես էլ հավաքագրման արդյունավետ վարչարարության բացակայությամբ: Փաստորեն, համայնքները զրկված են սեփական հարկատեսակները հավաքագրելու փաստացի իրավունքից, ինչը վերապահված է հարկային մարմիններին: Այդ համակարգի հետագա ապակենտրոնացումը բյուջեների հավաքագրման ցուցանիշներում կտա դրական արդյունքներ, քանի որ հարկային մարմինները շահագրգռված են ավելի շատ հավաքագրել պետական բյուջեի եկամուտ հանդիսացող հարկատեսակները, որոնք անհամեմատ մեծ գումարներ են կազմում հողի հարկի եւ գույքահարկի համեմատությամբ:

Կենտրոնացված տեղական կառավարման համակարգը՝ մատուցվող ծառայությունների ընդգրկումով, որակով եւ արդյունավետությամբ զիջում է ներկայումս գործող ժողովրդավարական համակարգերին, որոնց տարածքի բնակչությունը անմիջականորեն կամ ներկայացուցիչների միջոցով մասնակցում է տեղական կառավարման գործընթացին, հետեւաբար՝ վաղ թե ուշ փոխարինելու է գալիս երկրորդը:

Այսօր իսկ հնարավոր է սկսել ապակենտրոնացման գործընթացը՝ լիազորությունների մի մասը տեղափոխելով խոշոր համայնքներ (ասենք՝ 15 հազ. եւ ավելի բնակիչ ունեցող քաղաքներ), իսկ հետագա ապակենտրոնացումը իրականացնելու համար Հայաստանում պետք է իրականացվի ռեգիոնալ ինքնակառավարում: Հարցն այն է, որ ներկայիս մարզերը բաղկացած են նախկին խորհրդային մի քանի տարածաշրջանների (37 շրջան) հանրագումարից: Այդ տարածաշրջանները ձեւավորվել են տասնամյակների քաղաքաշինական պրակտիկայի եւ տնտեսության զարգացման արդյունքում, ավելի առանձնանում են իրենց լինգվիստիկ, մշակութաբանական եւ այլ հատկություններով: Այս ամենից բացի, ամենակարեւոր հանգամանքն այն է, որ կառավարման բոլոր ինքնակառուցվածքները ներկայումս էլ գործառնում են հենց այդ տարածաշրջանների շրջանակներում: դրանցում ռեգիոնալ ինքնակառավարում իրականացնելու դեպքում հնարավոր դարձնելով լիարժեք ապակենտրոնացումը: Իսկ մարզպետները կիրականացնեն միայն ընդհանուր իրավական հսկողություն:

Լեզուն պետականության հենասյունն է

Ապրիլի 3-ին գրողների միության ընդլայնված պլենումը քննարկում էր «Երկլեզու կրթություն» թեման, որն առաջին հայացքից թվում է, թե առնչություն չունի գրողների հետ, սակայն լեզուն ոչ միայն գրական խոսքի ակունքն է, այլեւ առհասարակ մշակութային իրականությունը, մշակութաբանական մթնոլորտը ձեւավորող գլխավոր գործոնը: Այս իմաստով լեզվի խնդիրն իսկապես գրողների միության մշտական ուշադրության առարկան պիտի լինի:

Հովհաննես ԵՐԱՆՅԱՆ

Բացի այդ, խիստ գովելի է, որ միությունը վերջին շրջանում, զուտ գրական միջոցառումներին զուգընթաց, կազմակերպում է նաեւ հասարակական հնչեղություն ստացած թեմաների քննարկումներ, ինչը գրողին նաեւ մտավորական է դարձնում, մղում հասարակական ակտիվ մտահոգության: Իսկ լեզվի խնդիրը երբեմն-երբեմն ցնցում է հասարակությունը՝ մերթ անհատ պատգամավորի, մերթ էլ մի ամբողջ խմբակցության ԱԺ ներկայացրած տարբեր օրինագծերի արդյունքում, օրինագծեր, որոնք հավակնում են փոխել ոչ միայն «Լեզվի մասին» գործող օրենքը, այլեւ նույնիսկ հայերենի՝ որպես պետական լեզվի՝ Սահմանադրությամբ ամրագրված մենիշխանությունը:

լեզվի խնդիրը երբեմն-երբեմն ցնցում է հասարակությունը՝ մերթ անհատ պատգամավորի, մերթ էլ մի ամբողջ խմբակցության՝ ԱԺ ներկայացրած տարբեր օրինագծերի արդյունքում, օրինագծեր, որոնք հավակնում են փոխել ոչ միայն «Լեզվի մասին» գործող օրենքը, այլեւ նույնիսկ հայերենի՝ որպես պետական լեզվի՝ Սահմանադրությամբ ամրագրված մենիշխանությունը:

Դեռեւս մեկ տարի առաջ «Երկիրը» կազմակերպել էր Կլոր սեղան, որի թեման հենց այս զույգ մտահոգություններն էին՝ անխոհեմ օրինագիծ եւ, այսպես կոչված՝ երկլեզու ուսուցման մեթոդ: Դեռեւս այն ժամանակ մասնագետները համոզիչ փաստարկներով կարողացան ապացուցել, որ երկլեզու ուսուցման մեթոդը խաթարում է մանկան մտածողությունը: Արդյունքում երեխան ո՛չ հայերենին է պատշաճորեն տիրապետում եւ ո՛չ էլ ռուսերենին: Իսկ իրավաբանները, ԱԺ պատգամավորները փաստեցին, որ մեթոդն ինքը օրենքի խախտում է, որովհետեւ «Լեզվի մասին» օրենքում հստակ գրված է, որ ՀՀ-ում կրթության լեզուն հայերենն է: Կրթության եւ գիտության նախարարության պաշտոնյաներն այն օրերին հավաստիացնում էին, թե մեթոդն ընդամենը գիտափորձ է եւ շուտով կավարտվի: Սակայն այս մեկ տարվա ընթացքում Բելլա Եսայանյանի «Երկլեզու ուսուցման» մեթոդը ոչ միայն շարունակում է գոյատեւել, այլեւ տարածում է գտնում: Մեթոդի էությունը մեկն է. նույն դասաժամի 15 րոպեն անցկացվում է հայերեն, հաջորդ 15-ը ռուսերեն, եւ այդպես շարունակ: Աշակերտը պարտավոր է 15 րոպեն մեկ հարմարվել նոր լեզվական իրադրությանը: Պլենումը, որի զեկուցողները՝ ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանը, լեզվի տեսչության աշխատակից Դավիթ Գուլզադյանը, բանասիրության դոկտոր Ռոման Դալլաքյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, ԱԺ պատգամավոր Շավարշ Քոչարյանը, թարգմանիչ-լեզվաբան Նատալյա Աբրահամյանը, ՀԴՄ նախագահ Լեւոն Անանյանը, միակարծիք էին, որ թե՛ այս մեթոդը եւ թե՛ մանավանդ «Օրինաց երկիր» կուսակցության՝ ԱԺ ներկայացրած օրինագիծը երկրորդ պետական լեզու ունենալու մասին, լրջորեն վտանգում են մեր անկախության կարեւորագույն ձեռքբերումներից մեկը՝ «Լեզվի մասին» օրենքը:

- «Օրինաց երկիր»-ի օրինագանցումները,- մատնանշեց Սիլվա Կապուտիկյանը,- պատահականություն չեն եւ ամենեւին ռուսերենի դերի կարեւորմանը չեն միտված:

Ֆրանսիական համալսարանի ռեկտորը այլ նպատակներ է հետապնդում: Պատճառաբանությունը, թե ռուսերենի դասավանդումը ցածր մակարդակի վրա է, համոզիչ չէ, որովհետեւ այսօր ցածր է նաեւ հայերենի, պատմության եւ առհասարակ բազմաթիվ այլ առարկաների ուսուցման մակարդակը: Իսկ ռուսերեն թեքումով դպրոցի կարիք չկա, ինչպես պարսկերեն, անգլերեն կամ ֆրանսերեն, որովհետեւ ռուսերենը ՀՀ բոլոր դպրոցներում պարտադիր ուսուցանվող լեզու է եւ իր կարգավիճակով շատ ավելի բարձր է, քան որեւէ օտար լեզու: Կամ այլ կերպ ասած՝ ռուսերենը մեզ համար ոչ թե օտար լեզու է, այլ երկրորդ մայրենի: Այնպես որ, կեղծ ռուսասիրությամբ այլ լեզուների համար ճանապարհ հարթողները սվին են վերցնում ոչ միայն սրբություն սրբոց հայերենի, այլեւ ռուսերենի դեմ: Եվ Շ. Քոչարյանի՝ «Օրինագիծը ԱԺ-ում քննարկելն անգամ անթույլատրելի է, ամոթ է, որ օրինագիծը եռօրյայի օրակարգ մտնի» տեսակետը լիովին համահունչ էր գրողների միության անսովոր լեցուն դահլիճի տրամադրությանը:

Զոհրապի առաջին լիակատար ժողովածուն

Գրականության եւ արվեստի թանգարանի հրատարակչությունը լույս է ընծայել Գրիգոր Զոհրապի երկերի ժողովածուն, որի երկու հատորն արդեն շքեղ հրատարակությամբ դրված է ընթերցողի սեղանին: Շուտով լույս կտեսնեն նաեւ հաջորդ երկու հատորները: Զոհրապի երկերի այս հրաշալի ժողովածուն տպագրվում է ԱՄՆ-ի Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Արեւելյան թեմի օժանդակությամբ, գրողի ժառանգի Դոլորես Լիպմըն-Զոհրապի կտակի հիման վրա:

Ժողովածուի արդեն տպագրված հատորներում ընդգրկված են Զոհրապի գեղարվեստական երկերը նորավեպեր, դիմանկարներ, բանաստեղծություններ, վեպեր, «Էջեր ուղեւորի մը օրագրեն», «Գույնզգույն» եւ «Ցիրուցան» խորագրերով երկերը:

Քառահատոր այս հրատարակությունը գրողի առաջին լիակատար ժողովածուն է, որը, ինչպես գրքի նախաբանում գրում է հրատարակիչ հիմնարկի տնօրեն Հենրիկ Բախչինյանը, նշանակալից երեւույթ է եւ թանկարժեք նվեր բանասիրությանն ու ընթերցող լայն հանրությանը:

Ավելացնենք միայն, որ Զոհրապի դստեր՝ Դոլորեսի կտակը պայման ունի գիրքը ոչ թե վաճառելու, այլ նվիրելու մտավորականների, գրողների, ուսումնասիրողների:

Սեփ. լր.

Գրահրատարակչությունը՝ փոփոխությունների շեմին

Կառավարությանն առընթեր գրահրատարակչության վարչությունը վերածվել է գրահրատարակչական գործակալության եւ ներգրավվել մշակույթի նախարարության կազմում: Այս որոշման դեմ հանդես եկան մի շարք գրողներ՝ մտահոգությամբ, որ առանց այդ էլ անբարենպաստ վիճակում հայտնված գրահրատարակչական գործը կարող է իսպառ կաթվածահար լինել: Այլ կարծիքի է վարչության պետ, բանաստեղծ Էդվարդ Միլիտոնյանը. «Պետությունը փորձում է նոր պայմաններին համապատասխան հարմարեցնել եւ կատարելագործել բնագավառը: Գրահրատարակչության ասպարեզում ահռելի փոփոխություններ են կատարվել, մասնավորեցվել է հրատարակչությունների 90 տոկոսը, բազմաթիվ նոր հրատարակչություններ են ի հայտ եկել, նոր տպագրատներ: Այսօր Հայաստանում ասպարեզը հաջող զարգանում է, ապրում, եւ կա առողջ մրցակցություն»:

Այո, եթե նկատի ունենանք, որ հրատարակված գիրքը հիսնապատիկ, երբեմն անգամ հարյուրապատիկ փոքր տպաքանակ ունի, քան նախկինում էր, իսկապես կարող ենք արձանագրել, որ ավելացել են տպագրվող գրքերն ըստ անունների: Գրքի տպագրությունը ձեռք է բերել անհամեմատ բարձր հրատարակչական որակ, ավելացել են կոնկրետ ուղղվածություն ունեցող հրատարակչությունները: Դրանցից Էդվարդ Միլիտոնյանն առանձնացնում է «Սարգիս Խաչենց» հրատարակչությունը, որը մշակույթի պատմության, փիլիսոփայական գրականության տպագրման ուղղվածություն ունի եւ հրաշալի մատենաշար է հրատարակում, ընդ որում նաեւ պետպատվերի շրջանակում: «Հայգիտակը» հրատարակում է շքեղ «սուվենիրային» գրականություն, կամ, ասենք, «Զանգակ 98-ը» մանկական գրականության եւ դասագրքերի հրատարակությամբ է մասնագիտացել:

Ըստ գրահրատարակչության վարչության պետի պետպատվերի շրջանակում հրատարակվող գրքերի համար բյուջեից հատկացվող գումարի չափը 2000-2002 թթ. եղել է անփոփոխ 90 մլն 600 հազար դրամ: Այն թեպետ մշտապես թերֆինանսավորմամբ է հասնում տերերին, բայց այսօր նշանակալի ներդրում է գրահրատարակչական գործում: Այս գումարի մեջ է մտնում նաեւ Հանրագիտարանի հրատարակման ծախսը: Նախկինում պետպատվերն իրականացնում էին մի քանի հրատարակչություններ «Նաիրի», «Արեւիկ», «Լույս», «Անահիտ»: Այժմ պետպատվերին մասնակցում է մոտ 30 հրատարակչություն, ընդ որում սեփական հայտերով: Նախկինում հայտերը ներկայացվում էին վարչություն, որի կազմում ստեղծված հանձնաժողովը որոշում էր հրատարակվող գրքերի ցանկը: Այժմ էլ, ըստ էդ. Միլիտոնյանի, կգործի այս հանձնաժողովը, բայց արդեն մշակույթի նախարարության կազմում, իսկ հայտերի մրցույթը կկազմակերպի պետական գնումների գործակալությունը: Հարցին, թե արդյո՞ք գրահրատարակչական գործակալության խնդիրը միայն գրքերի լույս աշխարհ բերելն է լինելու, թե՞ նաեւ սպառումը, ընթերցողին հասցնելը, ինչը նույնքան կարեւոր է, էդվարդ Միլիտոնյանի պատասխանը նույնպես լավատեսական է: Անցած տարվանից ձեւականորեն գործող գրադարանային կոլեկտորը ներգրավվել է գործուն աշխատանքի մեջ, եւ գրքի վաճառքը, որը կենտրոնացված է միայն Երեւանում, կբաշխվի նաեւ մարզերի վրա: Թեեւ նախկինում գոյություն ունեցող գրախանութների չնչին մասն է այժմ գործում, այնուամենայնիվ, պրն Միլիտոնյանը համոզված է, որ գրքի նկատմամբ համապատասխան հասարակական վերաբերմունքի ձեւավորման դեպքում դրանք բավարար են, որպեսզի հրատարակված բոլոր գրքերը գտնեն իրենց տերերին: Այնուամենայնիվ, էդ. Միլիտոնյանը համաձայնում է, որ կա գրադարանները նոր գրքերով համալրելու պրոբլեմ, թեպետ պնդում է, որ պետպատվերի շրջանակներում տպագրված մանկական գրքերը տրվում են դպրոցական գրադարաններին: Նրա կարծիքով այս հարցում կարեւոր նշանակություն կստանա «Պարտադիր օրինակի մասին» օրենքը, որը կպարտավորեցնի հրատարակիչներին իրենց լույս ընծայած գրքերի մի քանի օրինակ գոնե ազգային, մանկական եւ մի քանի գրադարանների տրամադրել:

Մեր կարծիքով սա հարցի խիստ մասնակի լուծում կլինի: Վարչության պետը, համաձայնելով մեզ հետ, ավելացնում է. «Ընթերցողի խնդիրն այսօր շատ բարդ է: Հարցը միայն սոցիալական բնույթի չէ: Պիտի ընդհանուր մշակութային մթնոլորտ ձեւավորվի, ինչը համարում ենք մեր աշխատանքի հիմնական ուղղություններից մեկը»:

Ըստ էդ. Միլիտոնյանի թե՛ իր ղեկավարած հիմնարկի եւ թե՛ գրողների միության առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է լինի ընթերցողի, հասարակության հետ կապերի վերականգնումը: Նախկինում լավագույն ձեւ էր գտնված հանդիպումներ հանրակրթական դպրոցներում, մշակույթի պալատներում, հիմնարկ-ձեռնարկություններում, գյուղերում:

Ըստ պրն Միլիտոնյանի այդպես գիրքը մտնում էր կյանք, եւ կյանքը մտնում գրականություն: Այդպես գրողը եւ հասարակական մեծ հարգանք էր վայելում, եւ հասարակության առջեւ մեծ պատասխանատվություն կրում:

- Երբ ստեղծագործող մարդուն վիրավորելով մղում ենք ինքնամփոփ վիճակի ինքն ու իր գրիչը, ինքն ու իր կտավը, ավելի շատ տուժում է հասարակությունը,- ասում է բանաստեղծ էդ. Միլիտոնյանը:

Մյուս խնդիրը, որ պրն Միլիտոնյանը չափազանց կարեւոր է համարում, մեր գրականությունը աշխարհին թարգմանաբար ներկայացնելն է: Սակայն այսօր չունենք գործող թարգմանիչներ, որոնք հայերենից կթարգմանեն տվյալ լեզվին: Այդ նպատակով թե՛ օտար լեզուների ինստիտուտում եւ թե՛ պետհամալսարանի համապատասխան ֆակուլտետում, ըստ Միլիտոնյանի, ճիշտ կլինի ունենալ գեղարվեստական խոսքի, գրական խոսքի թարգմանության բաժիններ:

Հ. ԵՐԱՆՅԱՆ

ԵՐԿԻՐ
5-11 ԱՊՐԻԼ, 2002 #11/1662/

Հանպատրաստից,
կամ՝ եթե չլինեին բարեկամները

Սոլթ Լեյք Սիթիում՝ ձմեռային պարաօլիմպիական խաղերի օրերին, Հայաստանից ուրախալի լուր ստացվեց: Լեռնադահուկորդ Սպարիկ Նազարյանը որդի էր ունեցել: Օլիմպիական ավանում շարունակ այդ մասին էին խոսում:

Գյումրեցի մարզիկին շնորհավորում էին բարձրախոսով, հատուկ ազդագրեր էին պատրաստվել:

Իսկ ընդհանուր առմամբ, մեր վեց լեռնադահուկորդներն էլ հաջող մրցելույթներ ունեցան: Նրանք հիմնականում տեղեր գրավեցին երկրորդ տասնյակում: Երեւանցի Արմենուհի Վալեսյանը վերհսկա եւ հսկա ոլորավայրէջքում համապատասխանաբար ճանաչվեց 8-րդը եւ 9-րդը: Արցախցի Միեր Ավանեսյանը 10-րդն էր արագընթաց վայրէջքում: Սպիտակցի Գարուշ Դանիելյանը 15-րդ եւ 18-րդ տեղերը գրավեց հսկա ոլորավայրէջքում եւ արագընթաց վայրէջքում:

Այնպես որ, 36 երկրների 420 մարզիկ-մարզուհիների մրցավեճում մեր պատվիրակները սոսկ «վիճակագիրների» դերում չէին: Ինչ խոսք, ցուցանիշներն ավելի բարձր կլինեին, եթե հայ օլիմպիականները նախապատրաստվելու լավ հնարավորություն ունենային: Ցավոք, Նագանոյում կայացած պարաօլիմպիական խաղերից հետո Հայաստանի ներկայացուցիչները միջազգային մեկնարկների չէին մասնակցել եւ միայն կարճատեւ ուսումնամարզական հավաք էին անցկացրել Ծաղկաձորում, որտեղ պայմաններն այն չեն:

Ինչեւէ, երախտապարտ ենք Հայաստանի կառավարությանը, որը միջոցներ հատկացրեց, որպեսզի մասնակցենք ստուգատեսին: Ի դեպ, ի տարբերություն օլիմպիական խաղերի մասնակիցների, պարաօլիմպիականներից յուրաքանչյուրը մուծում է 800 դոլար: Ստացած ֆինանսներով վճարեցինք ավիատոմսերի արժեքը, մեր 10 պատվիրակների անդամավճարը, նաեւ մարզիկների համար «մարտական» հանդերձանք գնեցինք:

Քաղաքացիական եւ շքերթային հանդերձանքը Հայաստանի ներկայացուցիչները որպես ընծա ստացան լրասնջելեսաբնակ Արմիկ Աղախանյանից: Այնպես որ, հայ պարաօլիմպիականներն ստուգատեսին ներկայացել էին պատշաճ հագուկապով, նաեւ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում էին: Տարբեր թերթերում, հանդեսներում հրապարակումներ եղան այն մասին, թե Հայաստանում հաշմանդամ մարզիկների շրջանում ինչպես է արմատավորվել թանկ մարզաձեւ՝ լեռնադահուկային սպորտը: Աշխարհում լայն տարածում ունեցող «Սպորտ իլյուստրեյթիդ» հանդեսը եւս իր «վերաբերմունքը» դրսեւորեց՝ զետեղելով Միեր Ավանեսյանի մեծադիր լուսանկարը:

Սոլթ Լեյք Սիթիում երկու անգամ ջերմ հանդիպում կազմակերպվեց տեղի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ: Ներկա էին նաեւ Դեն եւ Նենսի Գարդներները: Ամերիկյան այս ընտանիքը ստանձնել է ճակատագրի բերումով հարված ստացած, սպորտի միջոցով երկրորդ կյանքը վերագտած հայ մարզիկների հովանավորությունը: Մեր պատվիրակները մրցավայր էին ներկայացել խաղերի մեկնարկից մեկ շաբաթ առաջ եւ հյուրընկալվել էին Գարդներների օջախում, պարապելու հնարավորություն ստացել: Ամուսինները խոստացան հետագայում էլ աջակցել Հայաստանի ներկայացուցիչներին, օգնել նրանց, որպեսզի մասնակցեն հաշմանդամ մարզիկների տարբեր ստուգատեսների:

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հայաստանի ազգային պարաօլիմպիական կոմիտեի նախագահ

Մոսկվան հավատում է խոստումներին

Հունիսի 14-24-ին Մոսկվայում կկայանան ԱՊՀ եւ Մերձբալթյան երկրների պատանեկան խաղերը: Թե համալիր ստուգատեսի կազմակերպման հետ կապված ինչպիսի հարցեր քննարկվեցին Ռուսաստանի մայրաքաղաքում օրերս կայացած խորհրդակցությունում, խնդրեցինք ներկայացնել ՀԱՕԿ-ի նախագահ, ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի փոխնախարար ԻՇԽԱՆ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ:

- Ուշադրության կենտրոնում էին մարզաձեւերի ընտրության, մրցումների անցկացման վայրերի, մասնակիցների տեղավորման եւ այլ հարցեր: Այցելեցինք «Լուժնիկի» ստադիոն, այն մարզաբազաները, որոնցում կայանալու են խաղերը: Եղանք նաեւ «Իզմայիլովո» հյուրանոցային համալիրում: Միջոցառման նախաձեռնողը Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովն է: Կազմակերպիչները հնարավորն անում են, որպեսզի խաղերն անցկացվեն հավուր պատշաճի: Եվ բնական է, ստուգատեսը ոչ միայն մարզական, այլեւ քաղաքական առումով կարեւոր նշանակություն ունի: Փաստորեն, սա եւս մեկ փորձ է վերականգնելու նախկին կապերը:

Ուշագրավ է, որ մասնակից երկրներում խորհրդանշական կրակ է վառվելու, եւ այն հասցվելու է Մոսկվա: Նախատեսվում է, որ այդ արարողությունը Հայաստանում կկատարվի Գառնիի տաճարում: Ընդ որում, խոշոր հեռուստաալիքների օգնությամբ մասնակից բոլոր երկրներում այդ ծիսակատարություններից ռեպորտաժներ են ցուցադրվելու:

Խաղերի ծրագրում 16 մարզաձեւ է: Թերեւս, ավելացվի եւս մեկը՝ ձեռքի գնդակը: Խորհրդակցությունում ճշգրտվեց, որ ստուգատեսին մասնակցելու է շուրջ 5,5 հազար մարզիկ-մարզուհի:

Հայաստանի ներկայացուցիչներն ուժերը կչափեն գրեթե բոլոր մրցաձեւերում: Մոսկվա կուղեւորվի 160 մարզիկ-մարզուհի: Պատվիրակության կազմում կլինեն զգալի թվով լրագրողներ, նաեւ համույթներ: Ընդհանրապես, մշակութային միջոցառումների հարուստ ծրագիր է նախատեսված: Խաղերի բացման հանդիսավոր արարողությանը ներկա են լինելու ՄՕԿ-ի նախագահ Ժակ Ռոգեն եւ այդ կազմակերպության նախկին նախագահ Խուան Անտոնիո Սամարանչը:

Ի դեպ, ՄՕԿ-ի ներկայացուցիչները ցանկանում են, որ ստուգատեսի գրնվելու կարգավիճակն ընդլայնվի, եւ առաջիկայում կազմակերպվեն պատանեկան օլիմպիական խաղեր, որի ծրագրում տեղ գտնեն նաեւ ձմեռային մարզաձեւերը:

- Պրն Զաքարյան, խաղերում Հայաստանի ո՞ր մարզաձեւերի ներկայացուցիչներից նպաստելիքները մեծ կլինեն:

- Մեդալներ ենք ակնկալում հունահռոմեական ոճի ըմբիշներից, սամբիստներից, շախմատիստներից: Ուժեղ է նաեւ մեր ֆուտբոլային թիմը: Այնպես որ, հուսով ենք, որ հայ մարզիկները ձեռնունայն չեն վերադառնա:

- Իսկ ընդհանուր հաշվարկ կատարվելո՞ւ է:

- Անկեղծ ասած, տեղյակ չեմ: Ամենայն հավանականությամբ, վերջնական արդյունքները կամփոփվեն: Թերեւս, ոչ պաշտոնական հաշվարկ կկատարվի:

- Հայաստանի ներկայացուցիչների համար լավագույնը ո՞ր ցուցանիշը կհամարվի:

- Ցանկալի կլինի ընդհանուր հաշվարկով զբաղեցնել 5-6-րդ հորիզոնականները:

- Ինչո՞ւ մարզիկներ չենք ունենալու ծիասպորտի մրցումներում:

- Թանկ մարզաձեւ է: Դրանից բացի, այս տարիքի ներկայացուցիչների Հայաստանի առաջնություն չենք անցկացնում, ընտրության հնարավորությունը սահմանափակ է:

- Նախկինում ԽՍՀՄ համալիր ստուգատեսներին մեր պատվիրակներն ավելի վաղ էին սկսում նախապատրաստվել: Պարբերաբար ընդլայնված նիստեր էր անցկացնում հավաքական թիմերի աշխատանքը համակարգող շտաբը: Հայտնի էր յուրաքանչյուր թիմի պլան-պարտավորությունը, քայլեր էին ձեռնարկվում նախապատրաստությանը խոչընդոտող խնդիրները կարգավորելու համար: Ինչո՞ւ այժմ դա չի արվում:

- Մասնակցության պաշտոնական հրավերն ստացվել է երկու ամիս առաջ: Տեսակետ կար, որ խաղերը, կապված ֆուտբոլի աշխարհի առաջնության անցկացման հետ, ավելի ուշ, անգամ 2003 թվականին պետք է անցկացվեն:

Իսկ նախապատրաստության հարցերը սպորտվարչությունում կազմակերպված խորհրդակցություններում պարբերաբար քննարկվում են: Առանձին խնդիրներ չեն ծագում: Պարզապես, Հայաստանի պատանեկան առաջնություններն այս տարի փոքր-ինչ ավելի վաղ կանցկացվեն: Իսկ հավաքական թիմերը մինչեւ Մոսկվա մեկնելը 1-2 ուսումնամարզական հավաքի կմասնակցեն:

- Խաղերում հանդես եկած մարզիկները բուհերի ընդունելության քննությունների ժամանակ արտոնություններ ունենալո՞ւ են:

- Անպայման: Այդ հարցը կիստակեցվի ՀՀ ԳԿ նախարարության ղեկավարության հետ:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

Մարզիչներից ծրագիր են պահանջում

Ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիայի գործկոմը հաստատեց բարձրագույն խմբի առաջնության խաղացանկը: Իսկ ահա, Հայաստանի հավաքական թիմերի գլխավոր մարզիչների հարցը մնաց բաց: Կազմակերպության նախագահ Սուրեն Աբրահամյանը որպես ազգային, օլիմպիական, մինչեւ 19 եւ 17 տարեկանների թիմերի ղեկավարներ էր առաջարկել համապատասխանաբար «Շիրակի», «Միկայի», «Բանանցի» եւ «Փյունիկի» մարզիչներ Անդրանիկ Ադամյանի, Վալերի Գլադիլինի, Արմեն Գյուլբուդաղյանի եւ Օսկար Լոպեսի թեկնածությունները:

Խնդիր դրվեց, որ մասնագետները ծրագրեր ներկայացնեն: Այնպես որ, գործկոմն այս հարցին կրկին կանդրադառնա ապրիլի 10-ին:

Այս տարի՝ երկու խաղ

Նիոնում կայացած վիճակահանությամբ որոշվեց ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի (6-րդ խումբ) խաղացանկը: 2002 թվականին մեր ազգային ընտրանին կանցկացնի երկու խաղ: Սեպտեմբերի 7-ին հայ ֆուտբոլիստները կհյուրընկալեն ուկրաինացիներին, ապա արտագնա հանդիպումում ուժերը կչափեն հույների հետ (հոկտեմբերի 16-ին): Մյուս մրցամարտերը կկայանան այսպիսի հերթականությամբ. Հայաստան-Հյուսիսային Իռլանդիա (29.03.03), Իսպանիա-Հայաստան (2.04.03), Ուկրաինա-Հայաստան (7.06.03), Հայաստան-Հունաստան (6.09.03), Հյուսիսային Իռլանդիա-Հայաստան (10.09.03), Հայաստան-Իսպանիա (11.10.03):

Ֆեդերացիայի նախագահին ուղեւորվեց Ստամբուլ

Ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Սուրեն Աբրահամյանը մեկնեց Ստամբուլ, որպեսզի մասնակցի տարածաշրջանի ազգային ֆեդերացիաների ղեկավարների խորհրդակցությանը:

«Արարատի» հուսալի պաշտպանն այլեւս չկա

Հաջորդ տարի նա պետք է նշեր 60-ամյակը: Ֆուտբոլի ԽՍՀՄ չեմպիոն եւ գավաթակիր, ոսկեզօծված «Արարատի» պաշտպան Ալեքսանդր Կովալենկոն պատրաստվում էր նաեւ ապրիլի 21-ին խաղադաշտ դուրս գալ եւ մասնակցել հանրաճանաչ մարզիչ Նիկիտա Սիմոնյանի 75-ամյակին նվիրված «Արարատի» եւ ԽՍՀՄ հավաքականի վետերանների երեւանյան հանդիպմանը: Սակայն չհասցրեց, ճակատագիրը բարեհաճ չէր: Կաթվածահար Կովալենկոյին տեղափոխեցին հիվանդանոց, որտեղ էլ, ուշքի չգալով, կնքեց իր մահկանացուն:

Նա «Արարատի» կազմում մասնակցել էր 181 խաղի եւ դարձել 19 գոլի հեղինակ:

Դրանցից ամենահիշարժանը, թերեւս շուրջ երեք տասնամյակ առաջ Երեւանի «Հրազդան» մարզադաշտի բացման օրը «Կայրաթի» դարպասը խփած գնդակն է: Դա նորակառույց ստադիոնում «Արարատի» առաջին գոլն էր:

Սակայն Ալեքսանդրը, կամ ինչպես մտերիմներն էին կոչում՝ Շուրան, վստահ էր գործում հատկապես պաշտպանության կենտրոնում: Հուսալի խաղով նա վարակում էր բոլոր թիմակիցներին եւ մեծ հեղինակություն էր սիրված խաղընկերների, ֆուտբոլի երկրպագուների կողմից:

Հիրավի, Կովալենկոյի անժամանակ մահը ցնցել է բոլորին: Սուգ է հայկական ֆուտբոլում:

Բաժինը վարում է Գագիկ ԲԵԳԼԱՐՅԱՆԸ

ԱՌԱՋԻԿ

Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ

Ապրիլի 5-ին նվագախմբի համերգը
Ծրագրում՝ Մալեր «Սիմֆոնիա թիվ 5»
Դիրիժոր՝ ***Էդուարդ Թոփչյան***
Ապրիլի 9-ին Դաշնամուրային երաժշտության երեկո
Ժան – Կլոդ Պենտյե (Ֆրանսիա)
Ծրագրում՝ Շուբերտ, Շամոն, Ֆորեե
Ապրիլի 11-ին Համաշխարհային հոգեւոր երաժշտության գանձարանից
Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ «Սերենադ»
Դիրիժոր՝ ***Ալեքսանդր Սիրանոսյան*** (Ֆրանսիա)
Գլխ. դիր. եւ գեղ. ղեկ. ***Էդուարդ Թոփչյան***

Համերգների սկիզբը՝ 19.00-ին:

Երեւանի մանկական մեղեդիների պետական թատրոն

Ապրիլի 6-ին «Արթմնի երազ»
Ապրիլի 7-ին «Մետամորֆոզ»
Գեղ. ղեկ. ***Ժիրայր Դադասյան:***

Ներկայացումների սկիզբը՝ 18.00-ին:

Լոմիտասի անվան կամերային երաժշտության տուն

Ապրիլի 6-ին Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգը
Նվագախմբի հովանավոր ***Վաչե եւ Թամար Մանուկյաններ***
Գեղ. ղեկ. ***Արամ Դարաբեկյան***
Սկիզբը՝ 19.00-ին:

Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոն

Ապրիլի 6-ին «Բեռնարդան եւ նրա աղջիկները» Գարսիա Լորկա
Ապրիլի 7-ին «Հին աստվածներ» Լ. Շանթ
Գեղ. ղեկ. ***Վահե Շահվերդյան:***

Ներկայացումների սկիզբը՝ 18.00-ին:

Երեւանի կամերային թատրոն

Ապրիլի 5-ին «Կաբարե»
Ապրիլի 6-ին «Անտեր Ground»
Ապրիլի 7-ին «Սասունցի Դավիթ Կոպերֆիլդ»
Ապրիլի 12-ին «Միսս Հայաստան անաստվածային կատակերգություն»
Գեղ. ղեկ. ***Արա Երնջակյան:***

Ներկայացումների սկիզբը՝ 19.00-ին:

Արամ Խաչատրյան համերգասրահ

Ապրիլի 4 - 22-ը «Զազի օրեր Հայաստանում»
Բացումը՝ ապրիլի 4-ին

Սկիզբը՝ 19.00-ին:

Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն

Ապրիլի 5-ին «Սպանել սիրո համար» *Ա. Նիկոլայի*
Ապրիլի 6-ին «Մոռանալ Հերոստրատին» *Գ. Գորին*
Ապրիլի 7-ին «Կատակերգություն» *Հ. Պարոնյան*
Ապրիլի 12-ին «Զառ» *Մ. Սովաժոն*
Գեղ. ղեկ. ***Արմեն Խանդիկյան:***

Ներկայացումների սկիզբը՝ 18.00-ին:

Հ. Պարոնյանի անվան կոմեդիայի պետական թատրոն

Ապրիլի 5-ին «Տեր, մի թող մեզ անտեր» Ժ. Անանյան
Ապրիլի 11-ին «Իմ Զոնքաչը» Վ. Կոտոյան
Գեղ. ղեկ. ***Երվանդ Ղազանչյան:***

Ներկայացումների սկիզբը՝ 19.00-ին:

Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոն

Ապրիլի 5-ին «Մերձբալթյան կադրիլ» Վ. Գոտկին
Ապրիլի 6-ին «Ես քեզ այլեւս չեմ ճանաչում» Ա. Բեներետի

Ներկայացումների սկիզբը՝ 18.00-ին:

Մանկական ներկայացումներ
Ապրիլի 6-ին «Տերեմ-Տերեմոկ» *Ս. Մարշակ*
Գեղ. ղեկ. ***Ալեքսանդր Գրիգորյան:***

Սկիզբը՝ 12.00-ին:



Համազգային թատրոն

Ապրիլի 7-ին «Շաբաթն ուրբաթից շուտ եկավ» Ժ. Անանյան

Սկիզբը՝ 19.00-ին:

Մանկական ներկայացում
Ապրիլի 7-ին «Անբան Հուռին» Ա. Աղասարյան

Սկիզբը՝ 12.00-ին, 14.00-ին

Գեղ. ղեկ. ***Հրաչյա Գասպարյան***
Տնօրեն ***Սոս Սարգսյան***

ԱՍՏՂԱԳԻՐ

Խոյ - Ծննդյան օրվանից հետո կսկսվի նոր շրջան: Հայտնի բան է, որ ինչպես անցկացնեք ծննդյան օրվան հաջորդող քսան օրը, այդպիսին էլ կլինի հետագա ամբողջ տարին: Արդյունքներն սպասել չեն տա: Ապրիլի 8-ին ձեզ վրա կտեղա ոսկե անձրեւ, իսկ 9-10-ը շահավետ առաջարկ կստանաք աշխատավայրում:

Ցուլ - Գործերը, աշխատանքը, ուսումը մոռացության են մատնված. տրամադրված եք վայելքների եւ խրախճանքների: Օգտվեք պատեհությունից եւ լուծեք սրտամոտ հարցերն ու տան համար թանկարժեք գնումներ կատարեք: Ապրիլի 6-ը տրամադրեք առօրյա գործերին. այդ օրվանից չարժե ուրիշ բան ակնկալել:

Երկվորյակներ - Աշխատավայրում ուշադիր եղեք պայմանագրերին, փաստաթղթերին, ստացականներին եւ բոլոր լուրջ թղթերին, այդ թվում նաեւ ֆինանսներին վերաբերող հարցերում: Ի դեպ, կարող են եկամտի նոր աղբյուրներ հայտնվել, սակայն չարժե դրանք ի ցույց դնել: Ապրիլի 8-9-ը հիանալի օրեր են անձնական ու ընտանեկան հարաբերությունների կարգավորման համար:

Խեցգետին - Ապրիլի 8-9-ը կդրսեւորվեք որպես ձեր ոլորտի իսկական գիտակ. մնում է միայն նախանձել ձեր հնարամտությանը եւ խոր իմացությանը: Սակայն մտադիր չեք բավարարվել ձեռք բերածով եւ արդեն շաբաթվա կեսին լրջորեն կմտածեք կրթության բարձրացման մասին:

Առյուծ - Պահպանում եք կարիերիստական (լավ իմաստով) հակումները. Այս շաբաթը հաջողակ է ծառայողական աստիճաններով վեր ելնելու համար. հնարավոր է շուտով ղեկավարությունը ձեզ առաջարկի պաշտոնի բարձրացում: Հանգստյան օրերին արտասովոր զվարճանք կազմակերպեք:

Կույս - Շաբաթը նպաստավոր է գործընկերների հետ շփումների համար: Իսկ ահա, ավելի լուրջ ոլորտներում՝ ֆինանսների եւ գուցընկերների հետ հարաբերություններում, հնարավոր են խոչընդոտներ: Ի դեպ, լավագույն լուծումը կարող է ծագել մարզադահլիճում պարապելիս կամ մաքուր օդում զբոսնելու ժամանակ:

Կշեռք - Չարժե տարվել ուրիշի հոգսերով, քանզի հիմա նոր օգտակար կապեր հաստատելու բազում հնարավորություններ կունենանք: Նկատի ունեցեք, որ եկել է ժամանակը, երբ ինքնուրույն կարող եք որոշել զուգընկերոջ հետ ձեր միության հետագա ճակատագիրը:

Կարիճ - Այս շաբաթ ֆինանսական հաջողություն մի ակնկալեք: Դրա փոխարեն, սիրո մեջ ձեր քախտը կբերի բոլոր աստղակերպերից առավել: Հասկանալի է, որ երբ վրա է հասնում սերը, մասնագիտական եւ մյուս խնդիրները երկրորդ պլան են մղվում: Շաբաթվա վերջին կարեւոր տեղեկություն կստանաք կապված կարիերայի հետ:

Աղեղնավոր - Խիստ հագեցած շրջան է նոր ծանոթությունների եւ օգտակար կապերի առումով: Գլխավորն այն է, որ այս շաբաթ ձեզ կհաջողվի լիակատար փոխըմբռնման հասնել մերձավորների, հատկապես երեխաների հետ: Չափավոր կերպով դրսեւորեք ձեր հեղինակությունը եւ կկարողանաք զավակներին փոխանցել սեփական կենսափորձը:

Այծեղջյուր - Շաբաթվա սկզբին բազմաթիվ նոր անձնական գործեր կունենաք եւ մի շարք հանձնարարություններ կստանաք կողակցից: Սակայն արդեն ապրիլի 8-ին կնկատվի նոր միտում, եւ, որ հաճելի է, այն կպահպանվի մի քանի շաբաթվա ընթացքում: Ֆինանսական դրությունը նկատելիորեն կբարելավվի: Կհաջողվի լուծել անշարժ գույքին առնչվող հին պրոբլեմը:

Ջրհոս - Իսկական հաճույք կստանաք ներդաշնակ ընտանեկան կյանքից, ընտանիքում պաշտպանվածության եւ անվտանգության զգացողությունից: Գործնական հանդիպումներն առավել հաջող կընթանան սրճարանի կամ ձեր տան անբռնագբոս մթնոլորտում: Հանգստյան օրերին արժե սահմանափակել սնունդը, քանզի այդ օրերին ավելորդ քաշ ձեռք կբերեք վայրկենապես:

Ձուկ - Մոլորակները խոստանում են կայուն լավատեսական տրամադրություն: Ցանկություն կունենաք ինչոր բանով ուրախացնել թե ձեզ, թե հարազատներին: Իսկ ահա, շաբաթվա վերջն ավելի կանխատեսելի կլինի. դրա համար ավելի լավ է հանգստյան օրերն անցկացնել տանը, հարազատների շրջանում: Չարժե հեռավոր ճամփորդություններ ծրագրել:



ԳՆԱՀԱՏԵԼՈՎ

«ԵՐԿԻՐ»Ը

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆԸ՝

ԱԶԳԱՅԻՆ ՄԸ

ԿԸ ՍՏԱՆՁՆԷ ԱՅՍ ԹԻՒԻՆ

ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ։